ԱԼԻՔՍԱՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ

# Երկու պատմվածք

(«Սփյուռքահայ պատմվածք» ժողովածուից, Երևան, 1984, էջ 492-524)

## ԱՎԵՏԻՍ ԱԼԻՔՍԱՆՅԱՆ

# ՊԻՏԻ ԳՆԴԱԿԱՀԱՐՎԻՆ ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

## Ա.

Սուր սուլոց մը լսվեցավ նախ հեռուեն: Հետո ուրիշ երկարատև ու իրարու հաջորդող սուլոցներ և հալածող երկարյա կրունկներու աղմուկները լսվեցան միշտ հեռուեն ու քաղաքը կրկին թաղվեցավ լռության մեջ: Սարսափազդու էր քնացող, կամ քնանալ ձևացնող այդ լուռ քաղաքը, որ անձև, անսահման ու անզգա անորոշության մը վերածված էր մութին մեջ:

Կես գիշերը անցած էր արդեն:

Խավարին մեջ ծնունդ առնող օրը դավադիրի մը նման զգույշ ու դանդաղ, բայց համառ քայլերով կառաջանար դեպի լուսաբացը: Ինչքա՞ն պիտի ուզեր Հայկ, որ ժամանակը կանգ առներ այդ պահուն, հավիտենականանար խավարը: Ինչքան պիտի ուզեր Հայկ, որ ամբողջ աշխարհը թաղված մնար այդպես մութին մեջ, որ ոչինչ շարժեր, որ երկինքն ու գետինը շփոթվեին իրարու հետ: Ու Հայկ ինչքան պիտի ուզեր որ չլսվեին այլևս սուլիչներու խլացուցիչ ձայնը և հալածող երկարյա կրունկներու սոսկալի աղմուկը:

Օձագալար սարսուռ մը, կռնակեն մեկնելով, շրջեցավ իր ամբողջ մարմնին վրա: Հայկ իր ուսերը թոթվեց, ավելորդ բեռի մը նման իր մարմինեն դուրս նետել փորձելով փետրվարյան այդ ցուրտը, որուն դեմ անշուշտ ինքզինքը պիտի չկարենար պաշտպանել իր կռնակի հին, մաշած ու պատռտած վերարկուն, որուն իսկական տերը այժմ Ֆրենի բանտին խցիկներեն մեկուն մեջ օրերը, ժամերը կհամրեր հավանաբար: «Լուր ունի՞ն արդյոք», խորհեցավ Հայկ, իր աջ ձեռքին ափովը սրբելով աչքերեն վազող արտասուքները, որոնք քիթին երկու կողմերեն սահելով կմաղվեին իր պեխերուն մեջեն ու կհոսեին մինչև շրթունքները:

Վերջին տարիներու ընթացքին տկարացած էին իր աչքերը: Օդի թեթև հոսանք մը, քիչ մը ընթերցում ու հաճախ ալ առանց պատճառի կջըրոտեին այդպես իր աչքերը: Իսկ առաջ, ինչ աչքեր ունեցած էր Հայկ: Սև, խոշոր ու սրատես, վարվռուն ու անդիմադրելի: Տակավին պատանի, Սկյուտարի Պերպերյան վարժարանի աշակերտ, իր աչքերը ավերներ սկըսած էին գործել դրացի աղջիկներուն սրտերուն մեջ, իրեն շահեցնելով

վաղահաս Տոն Ժուանի մը համբավը, որ սակայն,— գեթ իենք լավ գիտեր ճշմարտությունը,— կեղծ էր ու ոչ մեկ հաջողությամբ արդարանալի: Իսկ հիմա՞:

Շենք չնորհք կդողդողար հիմա ան: Բոցավառ կատաղության ու ատելության ալիքներով կփոթորկեր իր հոգին, բայց մարմինը կդողար: Ինք, նույն երեկոյան միայն իմացած էր, որ լուսաբացին պիտի գնդակահարվեին տղաքը, բոլորը միասին: Չէր կրցած փակված մնալ իր սենյակին մեջ: Չէր իսկ խորհած անկողին մտնել, գոնե մեկ քանի ժամ քնանալ փորձել: Սկսած էր ժամերն ու րոպեները համրել, որպես թե իրենն ալ մահապարտ, իրն ալ սպասեր ահավո՜ր լուսաբացին:

Գիտեր Հայկ, որ անօգուտ էր դուրս, փողոց ելլել այդ արգիլյալ ժամերուն: Ոչ թե այդպես առանձին, այլ եթե տասնյակներ, հարյուրներ իր նման փողոց իջնեին պիտի չհաջողեին հասնիլ մինչև բանտ ու դուրս հանել մահապարտները, իր ընկերները, իր հարազատ եղբայրները, որոնք պիտի գնդակահարվեին լուսաբացին:

Սարսափելի՜ էր քնացող կա՞մ քնանալ ձևացնող Փարիզի այդ փետրվարյան գիշերը, որ չէր նմաներ ուրիշ գիշերներու և որուն լուսաբացը պիտի չնմաներ ուրիշ լուսաբացներու: Չէր կրցած իր ընկերոջ սենյակին պատեն կախված հին, մաշած ու պատռտած վերարկուն տեսնել ու մնալ հոն: Չէր կրցած իսկ խորհիլ մտնել անկողին, ուր երկար ամիսներ պառկած էին իրենք երկուքը. ինքն ու իր ընկերը, որ այժմ Ֆրենի խցիկներեն մեկուն մեջ ժամերն ու րոպեները կհամրեր ու կհաշվեր հավանաբար:

Խենթություն էր, դատապարտելի անխոհեմություն, բայց որոշեց հանկարծ երթալ մինչև Ժանեթի տունը, բավական հեռու: Խստիվ արգիլված էր իրարու հանդիպիլ իրենցմե ունէ մեկուն բնակարանին մեջ, մանավանդ այդ օրերուն, ուշ գիշերին: Բայց... չէ՞ որ տղաքը պիտի գնդակահարվեին լուսաբացին: Ժանեթ, ինքն ալ լուր սացա՞ծ էր արդյոք: Թերևս, խորհեցավ Հայկ: Կրնա ըլլալ, վստահաբար նույնիսկ այդ պատճառով էր, որ ան չէր ներկայացած ժամադրության, եա առնելու համար Հայկի վստահված *Սիրթան։* Ի՞նչ ծանր էր չեխոսլովաքյան այդ երկայնափող ատրճանակը, իննհարվածյան: Հայկ գոհունակությամբ մտաբերեց, որ դուրս ելլելե առաջ զայն պահած էր սենյակին տախտակամածին ներքև, ապահով տեղ մը:

«Հո՞գս,— իր անխոհեմ որոշումը արդարացնել փորձեց Հայկ,— եթե բռնվիմ իսկ կրնամ օծիխս ազատել 24 ժամեն»: Քովը, զենքը վտանգող ոչինչ կար, իսկ թուղթերը կանոնավոր էին:

Երեք փողոց մնացած էր միայն հասնելու համար Ժանեթի տունը:

Քաղաքին կեդրոնեն հեռու գտնվող այդ թաղին մեջ նվազ էր գերմանացի զինվորներու հանդիպելու վտանգը: «Հապա ի՞նչ էին քիչ առաջվան սուլիչի ձայները...»,— հարց տվավ հանկարծ Հայկ ինքզինքին: Աղմուկը ճիշդ այդ կողմերեն լսված էր:

«Ըլլա՛ որ փորձանք մը պատահած ըլլա ժաների, չըլլա որ տարած ըլլան զայն ալ...»: Չէ՛, ինչոր ալ պատահեր, պիտի երթար մինչև աղջըկան փողոցը, դուռեն պիտի տեսներ ու հասկնար գոնե եղածը: Հասած էր արդեն փողոցին անկյունը ու մեկ քանի քայլերով պիտի դառնար զայն, երբ հանկարծ, շատ մոտեն լսվող քրքիջներու սուր ձայներ տեղն ու տեղը գամեցին զինքը:

Կրնար դեռ ետ դառնալ ու փախչիլ անաղմուկ: Նոր խնդուքներ, զըվարթ աղաղակներ արգելք հանդիսացան իրեն խորհելու այդ մասին: Խնդացողները երկու կիներ էին, երիտասարդ ֆրանսուհիներ: Դարձած էին փողոցը ու կմոտենային Հայկին: Իրենց միջև կգտնվեր գերմանական համազգեստով երիտասարդ մը, որ դժվարավ նետելով հանդերձ իր քայլերը, իր երկու ձեռքով անընդհատ կսեղմրտեր զինքը իրենց միջև ոտքի պահել ջանացող երկու կիներուն մերթ զիստերը, մերթ հետույքն ու կրծքերը, «օ լա՛, լա՛, օ լա՛, լա՛...» աղաղակներով:

Հայկ, որ հիմա գրեթե դեմ առ դեմ կգտնվեր երեքին հետ, փորձեց մութին մեջ ավելի հստակորեն տեսնել անոնց դեմքերը: Չէր խաբված, կիները հազիվ քսանամյա երիտասարդուհիներ էին, առատորեն շպարված, անորոշ դիմագծերով: Գերմանացի սպան ինքն ալ երիտասարդ էր, տարեկից կիներուն: Երեքն ալ գինովցած էին, բայց անոնց մեջ գերմանացին էր, որ «քաղաքը ծախած էր» ամբողջովին ու դժվարավ կհաջողեր ոտքի մնալ, երկու կիներուն թևերեն կախված:

Սարսափի ճիչ մը արձակեց հանկարծ կիներեն մին, որպես թե ուրվական մը տեսած ըլլար Հայկի երևույթին մեջ: Ավելի բարձր, ավելի սուր ճիչ մը արձակեց անմիջապես իր ընկերուհին ալ, որ փորձեց նույնիսկ իր թևը քաշել սպային մեջքեն ու փախչիլ:

«*Ռե՛սթ*... տե՛ղդ մնացիր», հրամայեց Հայկ չոր ու կտրուկ, առանց գիտնալու տակավին այդ պահուն թե ինչ կուզեր ընել, թե ինչ կրնար ընել:

«Ի՞նչ կուզեք ինձմե...», կմկմաց դողացող ձայնով մը զինքը առաջինը տեսնող կինը, իր ազատ ձեռքով վերարկուին տակ պահել հաջողելով ձեռքի ուռած պայուսակը:

«Ձեզմե, ոչինչ, մի՛ վախնաք...», պատասխանեց Հայկ, որուն ձայնը, սակայն, դարձած էր ավելի սպառնական:

Գերմանացի սպան տեղյակ չէր անցած դարձածեն: Գլուխը ինկած

չէր կուրծքին վրա, որպես թե կքնանար: Իր ձեռքերը, դադրեցուցած էին իրենց լպիրշ խաղերը ու կմնային կախված մանկամարդուհիներու ուսերեն, որոնք կթեքեին իր կողմը, դժվարավ կրելով ծանրությունը:

«Ի՞նչ ապուշ եմ», խորհեցավ Հայկ, «եթե զենքը հետս առած ըլլայի տեղն ու տեղը կսատկացնեի գինով շունը...»: Այս խորհուրդը իր աչքերուն փնտռել տվավ գերմանացիին մեջքի գոտիեն կախված ատրճանակի կաշիե պատյանը: Դժվար էր տեսնել, թե զենքը հո՞ն էր կամ ոչ: «Ո՞ւր պիտի ըլլա... անզեն փողոց պիտի չելլեր անշուշտ շունշանորդին», — եզրակացուց ան մտովի, որոշելով ավելի ուշադրությամբ հետևել գերմանացիին ձեռքի շարժումներուն: Կրնար սուտ գինով ձևանալ այդպես ու հանկարծ մերկացնել իր զենքը ու կրակել:

Մեկ քանի վայրկյան տևող այդ լռութենեն քաջալերված, երկու կիները ուզեցին շարունակել իրենց ճամփան: Նեղ մայթին վրայեն կարելի չըլլալով սակայն անցնիլ երեքով Հայկին մեկ կամ մյուս կողմեն, կիներեն մին, որ որոշ չափով գոած ըլլալ կթվեր իր պաղարյունությունը, քաշվեցավ պատին կողմը, իր ետևեն քաշելով նաև գերմանացի սպան և իր ընկերուհին:

«Կորսվեցե՛ք, դուք երկուքդ», գոչեց Հայկ անոնց դեմը կանգնելով: «Կորսվեցե՛ք, և շո՛ւտ...», կրկնեց ան երկրորդ անգամ, գրեթե պոռալով. «Եթե ոչ...»:

Այդ ազդարարության կսպասեին կարծես կիները: Առանց երկար քարակ խորհելու, առանց ընդդիմության որևէ փորձի, գրեթե բիրտ շարժումով մը ձգեցին գերմանացի սպային թևերը ու ետ դառնալով սկսան փախչիլ վազելով: Անհեցուկ գինովը կքեցավ ու իր ամբողջ մարմնով փռվեցավ գետնին վրա:

Հայկ, շվարած մնաց պահ մը: Ի՞նչ պիտի ըներ հիմա: «Ի՞նչ պիտի ընեմ, վա՜յ էշու կտոր... Ի՞նչ կա ուրիշ ընելիք, պիտի սատկեցնեմ գինը իր իսկ զենքովը... գերմանական իր իսկ զենքովը»: Ատիկա պիտի ըլլար իր առաջին քաջագործությունը: «Քաջագործություն...», մտովի հեգնեց ինքզինքը, «սպաննել՝ զգայազիրկ, գետին փռված գինով մը»: Պիտի չզգար սակայն, գինով կամ արթուն, պառկած կամ ոտքի, պիտի սպաներ զայն: Ինք ալ պիտի գիտնար սպաննել հրեշային բանակին մեկ ներկայացուցիչը, հոգ չէ թե երիտասարդ, թերևս քսանամյա: Թերևս անմեղ...

Մոռնալ ուզեց շուտով այս վերջին վերագրումը: Մոռցավ: Դառնությամբ, գրեթե զայրույթով մտաբերեց այդ պահուն, որ ցարդ իրեն չէր վստահված գլխավոր դեր մը ահաբեկչական որևէ աշխատանքի մեջ: Իրեն վիճակված էր թռուցիկներու աշխատանքը, կամ շատ շատ զենքը

ժաներեն առնել սա կամ նա ժամուն, սա կամ նա վայրկյանին ու փոխանցել իրսին կամ իկրեբին, սա կամ նա ժամուն, սա կամ նա վայրկյանին: Իր քաջությունը չէր եղած անշուշտ խնդրո առարկա, այլ իր վատառողջ վիճակը: Տասնամյակներե ի վեր իրմե անբաժան բռնիկ հոդացավեր զինքը վերածած էին կես անդամալույծի մը: Հապա՞ եթե դանդաղեր, հապա՞ եթե կաղար: Բայց, հիմա, խնդիրը ուրիշ ձև կներկայանար: Իրեն կմնար ծռիլ, բանալ կաշիե պատյանը, առնել մավզերը ու կրակել, մեկ, երկու, երեք անգամ... ու ավելի... և պարպել մինչև վերջին փամփուշտը... ու կծկել...

Մեկ քանի երկվայրկյան տևող իր այս մտածումները ընդհատվեցան հանկարծ: Գինովը սկսած էր երերկալ, խուլ ու անիմանալի ձայներ հանել ու ձեռքերը տանիլ դեպի իր մեջքի գոտին:

Հայկ անմիջապես ծռՀցավ ու երկու ձեռքերով բացավ կաշիե պատյանը: Մեջը զենք չկար, պարա՛պ էր:

«Վա՛յ արիկա... վա՛յ ավազակ...», հայհոյեց կատաղությամբ Հայկ ու սկսավ անապարանքով փնտռել գինովին վերարկուին, բանկոնին ու տաբատին բոլոր գրպաններուն մեջ: Իր ձեռքերը պտտցուց նաև գերմանացիին կուրծքին վրա ու անութներուն տակ: Ու ապա, հետզհետե անող կատաղությամբ, երեսի վրա դարձուց իր առջև փռված զգայազիրկ մարմինը և փնտրեց տաբատին ետևի գրպանին մեջ: Զենք չկար: Չկա՛ր...:

Ոտքի բարձրացավ: Կի՛ց մը, ապա երկրորդ մը և ուրիշներ, իր բարկությունը մեղմելու համար: «Արիկա՛, ավազա՛կ...»: Ո՞ւր էր խոզեր զենքը: «Արդյո՞ք...», խորհեցավ հանկարծ, հիշելով որ կիներեն մին փորձած էր իր պայուսակը պահել վերարկուին ներքև: Ինք կարծած էր այդ պահուն, որ զինքը զող մը նկատելով կինը պահել ուզած էր իր դրամը կամ զոհարեղենները, ո՛վ գիտե: Բայց, հիմա, վստահ էր Հայկ, որ այդ պայուսակին մեջ կգտնվեր գերմանացի սպային զենքը: Ինչո՞ւ...: Ո՞վքեր էին այդ մանկամարդ, բայց չափեն ավելի շպարված կիները: «Արդյո՞ք...», կրկնեց Հայկ մտովի, «արդյո՞ք մեզմե էին անոնք...»:

«Ի՞նչ պիտի ընեմ հիմա», հարց տվավ Հայկ ինքզինքին մտովի: Չգել հեռանալ, քանի դեռ ուշ չէր: «Ուրեմն պիտի ձգեմ, որ շունչանորդին պառկած մնա հոս հանգիստ...»: Այս մտածումը զայրույթի նոր ալիքներ բարձրացուց Հայկի հոգիին մեջ: «Շունչանորդի ֆաշիստ... շունշանորդի ջարդարար...»,— մրմռաց ու սկսավ կատաղությամբ նոր կիցեր իջեցնել սպային մարմնին, որ կմնար միշտ զգայազիրկ: Այս անշարժությունը զարմացուց հանկարծ Հայկը: Ի՞նչպես կարելի էր այսքան գինովնալ, դառնալ կենդանի մեռյալ: «Հասկցա՞... կիները անպայման թմրեցուցիչ խմցուցած են... ուրիշ ոչինչ»: Հապա՞ եթե թունավորած ըլլային

զայն ու ինք հող իր օձիքը ձեռք տար այդպես տխմարորեն: Ո՞վ պիտի հավատար թե ինք բանե մը լուր չուներ, թե ինք չէր թունավորողը: Չէ՛, իրեն ուրիշ բան չէր մնար ընելիք, եթե ոչ հեռանալ անմիջապես, քանի դեռ ուշ չէր: Ետ դարձավ ու սկսավ քալել արագ: Այդ հանգամանքը իրեն զգացնել տվավ կրկին ցուրտը ու սկսավ դողդողալ: Ցուրտն էր թե վախը...: «Ի՞նչ վախ, ումե՞ պիտի վախնամ» կշտամբեց ինքզինքը և ջղայնացած ուզեց կոնկել բաց վերարկուն: Կոճակը փրթավ, ինկավ գետին:

«Աս էր պակաս, մեկ կոճակ մնացած էր, ան ալ փրթավ» մենախոսեց, ու գետին ծռելով գտավ կոճակը և դրավ զայն իր գրպանին մեջ: Չբարկացավ սակայն: Ու հանկարծ, սկսավ խնդալ, մտաբերելով իր պատանեկության Սկյուտարի փողոցներուն մեջ լսած մեկ երգը.

Պատեն կախված իմ ջութակը ինկավ փշրվեց,
Վերջին անգամ լացող սրտիս արձագանք տվեց,
Ա՜խ իմ անուշ յար, ինչո՞ւ մոռացար,
Ինչո՞ւ զիս թողիր, թողիր հեռացար...

Այս վերջին տողը Հայկ երգեց գրեթե բարձրաձայն, զվարթ տրամադրությամբ: Ու հետո, հիշեց նաև իր մորը անհամար պատմություններեն մին, ուր կխոսվեր պատեն կախված սազի մը մասին այս անգամ: Տերունի մոր մը մեկ հատիկ տղան, նվագահար Աշուղ-Ղարիպը, իր մերժված սիրտը սփոփելու համար պիտի մեկնի «ղուրպեթ»: «Մերիկ (մայրիկ) կըսե աշուղ սիրատոչոր որդին մեկնումի պահուն, սազս անտ կկախեմ պատեն, եթե օր մը անոր թելերեն փրթի, հասկցիր որ կամ վերադարձած եմ, կամ մեռած...»:

Կրկին սկսավ դողդողալ: Գրպաններուն մեջ գտնվող իր երկու ձեռքերը մոտեցուց իրարու, իր կուրծքը ծածկելու համար անկոճակ վերարկույով: Չէր հիշեր հիմա թե մորը պատմության հերոսը՝ Աշուղ-Ղարիպ վերադարձա՞ծ էր տուն թե՝ մեռած: Բայց հիշեց, հանկարծ, փրթած կոճակին ու անկոճակ վերարկուին տերը՝ իր ընկերը՝ որ այժմ, ա՛յդ պահուն Ֆրենի բանտին մեջ իր վերջին ժամերը, իր վերջին րոպեները կհաշվեր հավանաբար: Կանգ առավ: Ի՞նչ, պիտի չկարենա՞ր օգտագործել առիթը, պիտի չկարենա՞ր գեթ մասամբ լուծել վրեժը իր ընկերոջ, իր ընկերներուն, որոնք պիտի գնդակահարվեին լուսաբացին, քիչ անդին զգայազիրկ գետին փռված սպային ընկերներուն կողմե: «Ո՞վ կըսե, որ այդ ավազակը պիտի չըլլար վաղը առավոտ իր ընկերները գնդակահարող ոճրագործներեն մին...»: Այս մտածումը սկսավ դղրդացնել Հայկի գանկը: Դուրս հանեց գրպաններեն ձեռքերը ու այսահարի մը կատաղությամբ սկսավ վազել դեպի ետ: Գերմանացի զինվոր սպան սկսած էր շարժտկիլ, բաներ մը մռլտալ:

«Գլուխը պատին զարնելով ջախջախեմ, սատկեցնեմ...»,— որոշել փորձեց Հայկ: Ծռեցավ գետին, երկու ձեռքերով բռնեց սպային ուսերեն ու մարմինը փակցուց պատին: Կրնա՞ր այդքան վայրագորեն սպաննել մարդ մը, որ զգայազիրկ, ինքզինքը պաշտպանելու անկարող վիճակի մը մեջ, գետին փռված էր իր առջև: «Ի՞նչ մարդ, ծո՛... Հրե՞շ մը...».— պատասխանեց իր իսկ մտածումին, ջանալով հերքել ու ժխտել զայն: «Կրնա՞մ արդյոք մատներովս խեղդել զինքը...»: Հաստ էր գերմանացիին վիզը: «Ո՞վ գիտե, ի՞նչեր կուտեն խոզերը»,— մրլտաց Հայկ բարկությամբ, համոզված ըլլալով որ իր մատերուն ուժը անբավարար էր խեղդամահ ընելու այդ առույգ ու առողջ մարմինը:

Խլացուցիչ աղմուկներ լսվեցան հեռուեն: Զինվորական կառքեր էին հավանաբար: Հայկ գետին նետեց ինքզինքը ու երկնցավ սպային մարմընին կողքին: Քանի մը րոպե վերջ լռություն տիրեց դարձյալ, բայց Հայկ խոհեմություն նկատեց չշարժիլ տակավին, մնալ պառկած գետնին վրա: Կրնար ըլլալ որ կառքերը մտնեին հանկարծ փողոցեն ներս:

*«Վօ՛ պին իխ»* (ո՞ւր եմ),— մրլտաց հանկարծ գերմանացի սպան, որուն մեկ ձեռքը եկած էր իյնալ Հայկի թևին վրա:

«Վա՛յ սրիկա... արթնցավ»,— խորհեցավ Հայկ առանց տեղեն շարժելու: «Հիմա՞...»:

«Ո՞ւր եմ...»,— կրկնեց գերմանացի սպան, ավելի հստակ, ավելի բարձր ձայնով: Եվ շարժեցավ, փորձեց նույնիսկ ոտքի ելլել, բայց գետին փռվեցավ կրկին:

«Հիմա՞...»: Ինքզինքին ուղղված այդ հարցումին պատասխանը հրըստակորեն պարզվեցավ հանկարծ Հայկի մտքին մեջ: Գետնեն վեր պիտի բարձրացներ զինովը ու քիչ առաջ երկու կիներուն ըրածին պես, պիտի մտներ անոր թևը ու պիտի տաներ զայն իր սենյակը: Հոն, անմիջապես պիտի սպաններ զայն տախտակամածին տակ պահված ատրճանակովը: Այսքա՛ն:

Անկողնին առջև, տախտակամածին վրա փռված էր հիմա գերմանացի սպային մարմինը: Հայկ աթոռակի մը վրա նստած էր ճիշդ դեմը ու հանդարտ շարժումներով մեկ ձեռքեն մյուսը կանցըներ երկարափող ատրճանակը: Որոշած էր, պիտի սպաններ զայն:

«Քրիստոսի կնմանի կոր սրիկա՛ն...»,— մենախոսեց բարձրաձայն, ու ինքն ալ զարմացավ այդ մտածումին վրա: Գեղադեմ երիտասարդ մըն էր իսկապես գերմանացի սպան: Գրեթե պատանեկան դիմագծեր: Աչքերը փակ էին այժմ, բայց Հայկ տեսած էր որ անոնք կապույտ էին, բաց գույն ու ջինջ: Դեմքը երկար էր ու ծնոտին վրա կար խորունկ փոսիկ մը: Մազերը առատ, ոսկեգույն գրեթե:

Նմանությունը սխալ էր, անշուշտ: Հայկ չէր կրնար իր մտքին մեջ կենդանացնել Քրիստոսի նկարը: Գիտեր միայն, որ գեղեցիկ դեմք ունեցած պետք է ըլլար ան, անսահման բարությամբ ողողված: Մոտեցավ, ավելի ուշադրությամբ ուզեց դիտել երիտասարդ սպային տժգույն դեմքը, ուզելով չարության, բրտության ու դաժանության հետքեր գտնել հոն: Զգուշ: Շտկեց իրանը ու հեռուեն սկսավ դիտել: Գերմանացի սպան հիմա սկսած էր ժպտիլ, բարի ու անմեղ արտահայտությամբ մը:

«Ուրտեղեն ո՞ւր Քրիստոսի նմանցուցի այս խոզին ձագը...»,— կըշտամբեց Հայկ ինքզինքը: Հիշեց իր տեսած մեկ քանի նկարները, երկարավուն մաշած դեմք մը, մինչև ուսերը երկարած մազերով: Անգգին խաչ մը ուսին վրա, ցնցոտիապատ մարմին մը, բոպիկ ոտքեր... Գողգոթայի ճամփուն վրա: Ու բարությամբ, բայց նաև տառապանքով լեփ լեցուն աչքեր...:

«Իսկ այս խոզին դեմքին վրա տառապանքի նշույլ միսկ չկա...: Գինով, քնացած վիճակին մեջ իսկ կխնդա...»: Ոտքի ելավ ջղայնացած, մեկղի հրեց աթոռակը ու աջ սուսինքը բարձրացուց կից մը զարնելու համար: Հրաժարեցավ, գլուխը աջ ու ձախ թեքելով: Քնացող գերմանացիին դեմքին վրա ժպիտը ավելի ևս տարածված էր հիմա:

«Իր մա՞յրը կերազե արդյոք, թե իր քույրը, կամ սիրուհին...», խորհեցավ Հայկ ու զենքը նետեց անկողնին վրա: Խոր քունի մեջ թաղված այդ մարմինեն վախնալ՝ ծիծաղելի էր անշուշտ: Երբ որ ուզեր կրնար սպաննել զայն, երբ որ ուզեր: Ու պիտի սպաններ քիչ հետո, անպայմա՛ն:

«Մայր, քույր կամ սիրուհի... խոզը ունի անշուշտ այդ բոլորն ալ... Ունի նաև հայր, եղբայրներ ու թերևս պապիկ ու մամիկ ալ... Ունի տուն, պարտեզ, ունի հավեր, ունի խոզեր ալ, իրե՛ն պես...»: Դատաստանական խորհուրդի մը առջև կխոսեր կարծես: Սկսած էր պաշտպանողական մը, բայց իր ներաշխարհին մեջ կուտակված դառնությունն ու զայրույթը սկսած էին դուրս պոռթկալ հանկարծ, զինքը վերածելով դատախազի մը, խիստ ու աններող:

«Իսկ մե՞նք, հարգելի դատավորներ— հոս, Հայկ իր ձեռքերը երկարեց դեպի արդարության անգոյ ու անտեսանելի ներկայացուցիչները, ու ապա, ժպտեցավ իր այդ դերասանական շարժումին պատճառով,— չունի՞նք, զրկված ենք այդ բոլորեն: Մեզմե ոչ ոք կհիշե իր պապիկն ու մամիկը, ու մենք շատերս չենք հիշեր նույնիսկ մեր մոր դիմագծերը... Հիշենք իսկ, չենք ուզեր վերատեսնել անոնց սարսափահար դեմքերը, մերթ գութ հայցող, մերթ անեծք որոտացող, բայց միշտ անհուն տառապանք ցոլացնող անոնց աչքերը... Չենք հիշեր, չենք ուզեր վերհիշել մեր

մայրերն ու հայրերը, որոնցմե շատերը մորթոտվեցան իրենց տան մեջ, երբ երեկոյան ընթրիքը կպատրաստվեր թոնիրին մեջ կամ դաշտերուն մեջ՝ երբ իրենց ճակտի արդար ու օրհնյալ քրտինքը կթափեր, արգասավորելու համար երախտագետ հողը...»:

Հայկ, մոռցած էր հիմա տախտակամածին վրա հնացող գերմանացի սպան: Դատաստանական այդ խաղը հարահուն հաճույք մը կպատճառեր իրեն ու որոշած էր պարպել ամեն ինչ, պարպվի՜լ ամբողջովի՜ն:

«Ձեզմե ո՞վ, հարգելի դատավորներ,— ձեռքերը կրկին երկարեց դեպի երևակայական ատյանը,— կրնա հասկնալ, կրնա դատել մեզ: Մեզ՝ հողազուրկ ու տնաքանդ որբերու սերունդս: Մեզ, որ մեր ծնողքներուն, մեր քույրերուն ու եղբայրներուն դիակներուն վրայեն, արևախանձ անապատներու և արյան ծարավի գետերու մեջեն անցնելով, ինկանք հոս, ձեր մեջ: Ու այս խոզը, ահա, կժպտի, երազելով հավանաբար իր մայրը կամ սիրուհին...»:

«Մայրը կամ սիրուհի՜ն...»,— ուզեց պոռալ Հայկ զայրալի, բայց փսփսուք մը միայն դուրս ելավ իր կոկորդեն: Իր հոգիին մեջ նահանջած էին այժմ ցասումի ալիքները, տեղի տալով տխրության մը, հեշիչ ու անսահման: Գնաց երկննալ անկողնին վրա: Ձեռքերը դրավ գլխուն տակը ու սկսավ խորհիլ Ֆրենի բանտին մեջ իրենց վերջին ժամերը համրող իր ընկերներուն, հարազատներուն մասին: Ամիսներե ի վեր մղձավանջային կյանք մը կապրեին անոնք: Պիտի գնդակահարվե՞ին արդյոք, կամ ցկեանս, երկարատև բանտարկությա՞ն պիտի դատապարտվեին թե ոչ ազատ պիտի արձակվեին: Այս հարցումները կրակե աղեղներու նըման կբոցավառեին անոնց սիրտն ու հոգին, կչարչարեին զանոնք տիվ և գիշեր: Ի՞նչեր ընելու, ի՞նչեր զոհելու պատրաստ էին անոնք, ազատելու համար մին իր զավակը, մյուսը իր ամուսինը կամ եղբայրը: Հայկ կճանչնար անոնցմե մեկ քանին: Սա՛ խարտյաշ աղջիկը, ինքն ալ դիմադրական շարժումի կամավոր մարտիկ, եթե կարենար աշխարհն իրար պիտի անցըներ Ֆրենեն դուրս հանելու համար իր սիրելին: Ու սա կինը, տակավին երիտասարդ բայց արդեն իսկ ալեհեր, որ իր մեկ հատիկ զավկին ազատությանը համար կրնար իր իսկ ձեռքերով պոկել իր երկու աչքերը որպես փրկագին: Ու նաև Ֆրենի բանտին առջև իր փոքրիկ երեխային ձեռքեն բռնած սա երիտասարդ սպասուհին, որուն խոշոր, խոշո՜ր ու սև աչքերուն մեջ մարիլ սկսած էին այլևս Միջերկրականի ալիքներուն խաղերն ու ցոլքերը:

«Սրիկանե՛ր... պիտի գնդակահարեն զանոնք լուսաբացին...»:

Ոտքի ցատկեց պարարտ ու դյուրամատչելի որս մը նշմարող կատղած գազանի մը նման ու նետվեցավ տախտակամածին վրա երկարած

գերմանացիին վրա: Երկու բթամատերը դրավ անոր կոկորդին, օղակավորեց մյուս մատները հաստ վզին շուրջ ու սկսավ սեղմել ուժգին: Գինովը խուլ հռնդյուն մը արձակեց, վեր քաշեց իր սրունքները և իր երկու ձեռքերով փորձեց ազատել իր կոկորդը: Բացված էին աչքերն ալ որոնց կապույտը պղտորած էր այժմ ու ջրոտած: Հայկ ակամա թուլցուց իր մատներուն սեղմումը:

«*Վօ պին իխ*... ո՞ւր եմ ես»,— հառաչանքի մը պես փսփսաց գերմանացին, մեկ երկու անգամ ազատ շունչ առնելե վերջ:

«Դժոխքի՛ն մեջ...»,— պոռաց Հայկ ոտքի բարձրանալով:— «Դըժոխքին մեջ, սրիկա՛, ուրկե դուրս պիտի չելլես այլևս... Հասկցա՞ր...»:

Որպես պատասխան զարմանքի ու վախի արտահայտություն մը պարզվեցավ երիտասարդ գերմանացիին դեմքին վրա: Աչքերը բացխըփեց, թուքը կլլեց մեկ քանի անգամ ու ապա ետ ետ քաշվելով հաջողեցավ կես մեջքով բարձրանալ ու կրթնիլ պատին:

«Օձին թմրությունը սկսավ անցնիլ...»,— խորհեցավ Հայկ, ուշադրությամբ հետևելով գերմանացիին շարժումներուն: Այս վերջինը, սակայն, մոռցած ըլլալ կթվեր սենյակին մեջ ուրիշի մը ներկայությունը և սկսած էր մենախոսել հազիվ լսելի ձայնով մը: Հայկ չհասկցավ, թե ի՞նչ կըսեր ան, բայց մեկե ավելի անգամներ որոշակի լսեց «*մութըր, մութըր*, մայրի՛կ» բառը: Ճակատը և ամբողջ դեմքը պատած էր քրտինքով... կաս կարմիր կտրած:

«Զըլլա՞ որ թունավորած ըլլան զինքը...»,— կրկին խորհեցավ Հայկ մտահոգված: Ինքը որոշած էր սպաննել զայն, այո՛, բայց պիտի չուզեր ուրիշի մը կողմե անշնչացված դիակ մը ունենալ իր ուսերուն վրա: Մոտեցավ ու ոտքի շատ թեթև հարվածով մը ուշքի բերել ուզեց գերմանացին:

Ճիշդ այդ պահուն սուր սուլոց մը լսվեցավ դուրսեն: Հետո ուրիշ երկարատև ու իրարու հաջորդող սուլոցներ և հալածող երկաթյա կրունկներու աղմուկներ լսվեցան դուրսեն: Հայկ պատուհանին կողմը վազեց, ոչինչ նշմարեց դուրսը, բայց սարսափով հաստատեց, որ խավարը սկըսած էր փարատիլ, որ մոտ էր լուսաբացը...:

Կարթնար քնացող, կամ քնանալ ձևացնող Փարիզը, որուն ձեռքերը կապ, բերանը փակված կթվեին ըլլալ և որուն սակայն ականներու կնճռոտ յուններուն զայրալիր ձայնը կկտրեր ու կանցներ քաղաքներեն ու երկիրները, ծովերն ու օվկիանոսները ու լսելի կդառնար մինչև երկու բևեռներուն մեջ: Քնանա՛լ, ի՞նչպես քնանար Փարիզը, երբ իր կողերը կարյունոտեին ամիսներե ի վեր, երբ իր պատերը ծածկված էին անհամար վերքերով՝ «կարմիր աֆիշներով...»:

«*Մութըր*... մայրի՜կ...», գերմանացի սպան կհեկեկար այժմ մանուկի մը նման: Իր աջ ձեռքը խրած էր մազերուն մեջ, կարծես ճանկել ու ճեղքել ուզելով իր գանկը, զոր կերերցներ մեկ աջ, մեկ ձախ, անվերջանալիորեն:

Հայկ մոտեցավ իր անկողնին ու բարձին երեսը պատռելով դուրս քաշեց փոքրածավալ «կարմիր աֆիշ» մը: Նստեցավ իր անկողնին վրա ու իր առջև պարզեց զայն: Տասը սև շրջանակներու մեջ տասը նկարներ. օտարականնե՜ր, համայնավարնե՜ր, հրեանե՜ր: Աղեղ մը ցույց կուտար անոնց պետը, սև առատ մազերով, բարձր ճակատով երիտասարդ մը: Հայ մը: *Էս-էս*ներու քարոզչական գրասենյակը իզուր ջանացած էր գազաններու նմանցնել զանոնք: Սև մելանի շարափոխությունները չէին հաջողած ծածկել անոնց մաքուր, ազնիվ ու առնական դիմագծերը: Տասը շրջանակներուն ներքև վեց ուրիշ նկարներ ցույց կուտային գործված «ոճիր»ները, կատարված «խափանարարությունները»:

«*Մութըր*... մայրի՜կ»,— կշարունակեր հեկեկալ գերմանացի երիտասարդ սպան, որ այժմ սկսած էր գլուխը պատին զարնել: Թա՛մ, թա՛մ, թա՛մ... Հայկի աչքերը հեռացան կարմիր աֆիշեն և ուղղվեցան պատին զարնվող գլխուն: «Քրիստոսին կնմանի կոր տղան»,— կրկնեց անգամ մը ևս Հայկ և իր ձեռքերը մեքենաբար երկարեց ատրճանակին: Իր աչքերն ալ այժմ արցունքոտած էին, ինքն ալ կուլար հիմա: «Խեղճ տղա...»,— փսփսաց, բայց անմիջապես վերջ ճշդեց բարձր ձայնով. «Խե՜ղճ տղաներ...»: Ու կորսվեցավ գերմանացի սպային գլուխը, ուրիշ գլուխներ եկան զարնվիլ պատին, ուրիշ գլուխներ, որոնք չէին հառաչեր, չէին տրտնջար: Թա՛մ, թա՛մ, թա՛մ... հուսահատության, նահանջի և անձնատվության թմբկամներ չէին անոնք, այլ հույսի ու հաղթանակի երգեր...:

Գերմանացի սպան դադրեցուց հանկարծ իր հեկեկանքները ու փորձեց ոտքի կանգնիլ: Երկայնահասակ էր ու թիկնեղ: Իր ամբողջ մարմնով պատին կրթնած էր հիմա ու ակնապիշ կդիտեր Հայկի ձեռքին մեջ գտնըվող ատրճանակը: Իր դեմքին վրա գինովության, սարսափի հետքերը կորսված էին հիմա: Ժպտեցավ նույնիսկ դեպի անկողին քայլ մը նետելե առաջ: Հայկի ձեռքի շարժումը ետ դարձուց նետված քայլը:

Լուսցած էր արդեն: Դուրսեն անցորդներու ու կառքերու աղմուկները սկսած էին շատնալ: «Հիմա թերևս դուրս հանած են զանոնք իրենց խըցիկներեն...»,— խորհեցավ Հայկ ու ազատ ձեռքովը հանկարծ, առանց որոշած ըլլալու նախապես, գերմանացիին աչքերուն դեմ պարզեց «կարմիր աֆիշ»ը:

Մնացյալը անցավ երազի մը պես շուտ ու անկապ: «*Մեռնողը պան-*

*տը՛*... մարդասպաններու խումբ...»,— լսել կարծեց Հայկ: Ու իրեն թվեցավ որ քրիստոսանման դեմքը այլափոխվեցավ, խարտյաշ մազերեն փոքրիկ խուրձ մը հարցականի մը նման ինկավ գերմանացի սպային ճակտին ու կարճ, քառանկյուն բեղեր գծվեցան անոր քթին տակը: Պատին կռթնողը հիմա ինքն էր, Դիվահա՛ր Նացին:

Հայկ ավելի վեր բարձրացուց «կարմիր աֆիշ»ը: *«Մեռուտըր պան-տը*... ոճրագործներ», ոռնաց անգամ մը ևս նացին կատղած: Հայկի ցուցամատը պրկվեցավ: *«Մութը՛ռ*... ախ, մայրի՛կ»: Գետին տապալող մարմնի մը խուլ աղմուկը կորսվեցավ հեկեկանքներու մեջ:

Հայկ չգիտցավ երբեք, թե որուն կուրծքեն դուրս փրթան անոնք, գերմանացի երիտասարդ սպայի՞ն թե իր:

Փետրվարյան ցո՛ւրտ բայց ջինջ հորիզոնով առավոտ մը կսկսեր բացվիլ Փարիզի վրա:

# ԱՆՈՒՆԸ ՄԱՍԻՍ ԴՐԻՆՔ

## Ա.

«Լմնցեր եմ...»,— խորհեցավ Ատոմ սնտուկը զգուշությամբ գետին իջեցնելե վերջ,— «մարդը ուքսունհի կմոտենա, ինձմե շատ ավելի հաջառողջ ու շատ ավելի ուժեղ է...»: «Մարդը»՝ իր հայրն էր, որ արդեն իսկ դուրս ելած էր երկրորդ սնտուկ մըն ալ ներս բերելու համար: Ատոմ տնտաց, դիտումնավոր: Այնպես ձևացուց, թե տեղ կքանա, վրա վրայի դիզված կապոցներն ու ծրարները կտեղավորե: Կհուսար, որ հայրը երկրորդ սնտուկը ներս պիտի բերեր առանձին: Հանկարծ, լսվեցավ հորը ձայնը.

— Թո՛ղ, աղջի, էդ փորովդ կնա տեն...

Դուրս վազեց: Կինը՝ Զապել, կփորձեր սնտուկին մեկ ծայրը վերցնել ու օգնել իր աներհոր:

— Քաշվե՛ անդին, սաստեց Ատոմ. շոգեկառքի պիտի չհասնինք, կամաց-կամաց...

Փոքրիկները, մեղուներու պես ժրաջան, ուրախ ու զվարթ, անընդհատ ներս ու դուրս կվազվզեին, երգերով, բարձրաձայն կանչերով: Աշխարհն իրենցն էր, պարտեզ ունեին այլևս, պտղատու ծառերով ու կա-

նաշեղեններով լեցուն, իսկ տասը փայլ անդին, իրենց ոտքերուն տակ կվազեր գետը... «խոշոր» Սեն գետը...։

— Չի՛ մոռնաք հա՛ ջուրին, ոտքերնիդ կկտրեմ,— պոռաց Ատոմ փոքրիկներուն ու ապա իր կնոջ դառնալով շարունակեց.— այս դուռը միշտ փակ պահելու է Զապել...։ Ինչպե՞ս գտար տունը, լավ է, չէ՞։

— Լավ է, լավ, պատասխանեց Զապել քաջալերական արտահայտությունով մը,— բայց ավելի լավ կըլլա նաև, որ ժամ առաջ ներս տանինք ամեն բան ու տեղավորվինք, ուր որ է կմթնե հիմա...

Այդ միջոցին տան վերին հարկեն պարտեզ իջան այր մը ու կին մը։

— Բարի եկաք,— ըսավ մարդը իր ձեռքը Ատոմին երկարելով, Պարոն Պատիկյան ինծի լուր տված էր ձեր գալուստը, բայց ոչ օրը գիտեինք, ոչ ալ ժամը... Ես հիմա վերադարձա չուկայեն...

Մարդը, գավառացի էր հավանաբար։ Կխոսեր եղանակով ու իր բառերը կզտներ դժվարությամբ։

— Անունս Մանուկ է,— շարունակեց ան,— կինս ֆրանսացի է, երկու հատ ալ աղջիկ ունիմ... տունը կաշխատիմ պարոն Պատիկյանի հաշվույն... հին ընկերներ ենք Պատիկյանին հետ, «ռեգիսթանս» ըրած ենք... ձեր հրամանքին մասին ալ լուր ունիմ...

— *Մե նո՛, մե նո՛*...— բացագանչեց հանկարծ կինը ու վազեց դեպի Զապելը, որ այդ խոսակցության ընթացքին կչանար պայուսակ մը ներս քաշել առանձինն։ Ու հետո, իր ամուսնուն դառնալով՝

— Մանուք, փոխանակ շատախոսելու, ներս տանինք ինչ որ կա, վերջը երկար կխոսիս հայրենակիցդ պարոնին հետ։

«Պարուն Մանուքը հայրենակցի կարոտը կքաշե... Երկու շաբաթ ի վեր անընդհատ ձեր մասին կխոսի,— շարունակեց ան, խոսքը Ատոմի ուղղելով։

— Կարն կապե, ժանին, կեղծ բարկությամբ ընդմիջեց Մանուկ ու Զապելի ձեռքեն պայուսակը առնելով ներս տարավ։

Կես ժամ վերջ պարտեզին մեջ բան չէր մնացած։ Աշխատանքին մեծ մասը կատարած էին Մանուկն ու իր կինը։

— Հիմա, վեր, մեզի ելլանք, սուրճ մը խմենք, հանգստացեք քիչ մը,— ըսավ Մանուկ իր ճակտին քրտինքները սրբելով։

Նեղ սանդուխե մը վեր բարձրացան բոլորը ու մտան փոքրիկ սենյակ մը։

— Դուք մեզմե շատ հոգնեցաք,— ըսավ անմիջապես Զապել շիկնելով, ու ապա Ատոմը ցույց տալով.— Պարոնը դուրսի աշխատանքներու համար է միայն, տան գործերու համար, զերո...

— Ամեն մարդ իր գործը, տիկին,— ընդմիջեց Մանուկ խորհրդավոր ժպիտով մը— անոր գործն ալ ուրիշները չեն կրնար ընել...

Ատոմ հեգնական արտահայտություն մը նշմարեց իր կնոջ դեմքին վրա, մազ մնաց, որ բարկանար, բայց զսպեց ինքզինքը:

Ժանին, որ այդ խոսակցութենեն բան չէր հասկցած, մոտեցավ Զապելի ականջին ու փսփսաց.

— Քանի՞ ամսու է...

— Յոթը...,— պատասխանեց Զապել տխուր շեշտով մը:

— Ես ավելի կարծեցի,— ըսավ Ժանին ու հետո, ձայնը ավելի մեղմացնելով, հարցուց.— Ի՞նչպես կբերեք, շատ կտառապի՞ք...

Զապել, գլուխը աջ ու ձախ երերցնելով հասկցուց թե՝ ոչ շատ, ոչ ալ քիչ...

— Սուրճերը ի՞նչ եղան, սուրճերը... Վերջը երկար կխոսիս տիկինին հետ,— բարձրաձայն ընդմիջեց Մանուկ, որ կերևի չէր մարսած իր կնոջ քիչ առաջ պարտեզին մեջ րրած դիտողությունը:

Ոտքի ելավ Ժանին, հանդիմանական մեղմ ակնարկ մը նետելով իր ամուսնուն: Հառաջացավ դեպի խոհանոց, որուն դռան առջև ետ դարձավ հանկարծ և խոսքը Ատոմի ուղղելով, հարցուց.

— Անունը ի՞նչ պիտի դնեք...

— Եթե մանչ ըլլա, Մասի՛ս,— պատասխանեց Ատոմ վճռական:

Զապել իր ուսերը թոթվեց.

## Բ.

Ատոմ և իր ընտանիքը տասնըհինգ օրե ի վեր հաստատված են իրենց նոր բնակարանին մեջ: Կգրավեն շենքին ամբողջ գետնահարկը, որ կբաղկանա սենյակե մը, խոհանոցե մը և ընդարձակ սրահե մը, որ սակայն ո՛չ դուռ ունի, ո՛չ պատուհան, իսկ պարտեզին նայող կողմը բաց է ամբողջովին:

Ատոմ, Զապել, իրենց երկու աղջիկներն ու մանչուկը կպառկին սենյակին մեջ, քովե քով շարված մահճակալներու վրա: Սենյակին խորը բաց մնացած է հազիվ կես մետր երկարությամբ միջոց մը, ուր վրա վրայի դիզված են մեծ ու պզտիկ սնտուկներ, պայուսակներ ու ծրարներ: Գաղթական ընտանիքին ամբողջ հարստությունը:

Ատոմի մայրը կպառկի խոհանոցին մեջ, դաշտային ծալլվող մահճակալի մը վրա: Հայրը, փորձեց նախ երկրորդ մահճակալ մը զետեղել ու պառկիլ իր կնոջ մոտ, բայց շարժելիք տեղ չմնաց, պետք էր մեկուն

կամ մյուսին վրայեն ցատկել ներս մտնելու կամ դուրս ելլելու համար։ Ծարահատ՝ շալկեց դաշտային մաճճակալը ու անցավ քովի ընդարձակ, դուռ ու պատուհան չունեցող սրահը։ Այսպես անա, ավելի քան կես դարու մե՛կ անկողնի մեջ ու մեկ բարձի վրա անցնող իրենց ամուսնական կյանքը կընդհատվեր հոս ու կերկնդեր... անկողինները կբաժնվեին, բարձերը նույնպես...։ Մերացան մեկ բարձի վրա, բայց իրենց ծերությունը պիտի շարունակվեր զատ զատ բարձերու վրա, այսպես է «դուրպեթ»ը...

Առոմ, այդ առաջին օրը .արթնցավ կես գիշերին։ Ներսը, խոհանոցին մեջ հայր ու մայր բարձրաձայն «կռնեին ու կուտային»... Քիչ մըննաց պոռար, սաստեր թե՝ չէի՞ն ամչնար կես գիշերին այդպես աղմկելով, ո՞ւր կկարծեին իրենքզիրենքին...։ Ապա, ծերերուն խոսքերը հասան իր ականջին, չհանդգնեցավ ձայն հանել։ Հանցավորի մը նման կծկվեցավ իրեն իր վրա, պզտիկցավ ու կուսվիլ փորձեց վերմակին տակ, որպեսզի չլսե, չլսե...։

— Խիպ չունիս, ամոթ չունիս մա՛րդ,— կպոռար մայրը,— էլ ի՞նչ կարտոսս... Փառք տուր Տիրոջ, որ դուրսը չմնացինք, էսքենն էլ որ գրտավ տղեն...

— Տղեն, քո՛ տղեն,— կպատասխաներ հայրը հեգնելով,— քո տըղեն լավ քանդեց մեր տունը, արավ մեզ «փերիշան»... տըհա, տըհա չենք գիտեր ի՛նչ կեղնի...

— Ձենդ կտրիր, մարդ, ձենդ կտրիր, տղեն ի՞նչով է մեղավոր... Է՞ն քեզ ասաց ծախես տուն տեղ, մալ մուլք, վազես իր ետևեն...

— Տեր կացի տեր էկա,— կզայրանար հայրը— խո քո տղեն ինձ չասաց կերթանք յապաննու երկիր, ասաց կերթանք հայրենիք, ասաց կերթանք Հայաստան...

— Տե կնա տեն, մարդ խելքդ[1] ես... տղեն ի՞նչ անի, ճամփըները գոց են... Չե՞ս տեսներ իրեն էլ խալումաշ կեղնի...

Առոմ կթաղվեր վերմակին տակ բայց չէր հաջողեր չլսել։ Հալած ու մաշած էր արդարև վերջին երկու տարվան ընթացքին։ Մորը պաշտպանողականը կհուզեր զինքը անշուշտ, «մայրս է վերջապես» կխորհեր, «զավակը ինչքան ալ անիրավ ըլլա, արդա՛ր է միշտ մոր աչքին», բայց ճշմարիտ էին իր հորը խոսքերն ալ, ճշմարիտ ու տխուր...։

Ու գիշերուան խավարին մեջ և բրդե հաստ վերմակին տակ փակված իր աչքերուն առջևն իսկ կպատկերանար երկու տարիներ առաջվան իր կյանքը, հոն, հեռավոր Պոլսո մեջ...

Երկու տարիներ առաջ...

---

[1] Խենթեցեր ես

«Պիտի երթաք» որոշած էին անոնք ու սկսած էին ոչինչ գիներով ծախել ինչ որ ունեին: Ինչ որ ունեին— ավելի ճիշդ կըլլա ըսել— իրենց ծնողները: Անոնք, որովհետև, մեծ բան չունեին իրենց հաշվույն, բացի հազար հատոր գիրքերե, որոնք ձրիորեն բաժնվեցան ասոր ու անոր: Աշխատանքը, զոր կտանեին Ատոմ ու իր մեկ քանի ընկերները Պոլսո մեջ, հոգնեցուցիչ էր թեև ու սպառիչ, բայց որպես նյութական վարձատրություն՝ զերո՛, եթե ոչ պակաս:

Ատոմ, վերմակին տակ կծկված, լսել կ՚արժեր տակավին իր հորը անվերջանալի տրտունջները այդ շրջանին:

— Կնիկ, քո տղեն կտքնի, կչարչրվի, աղեկ, ո՞ւր է խերն, ո՞ւր է պերեքեթն... Թե ավարճի եղներ իմ մոտ էլ ի՛նչ տարտ կմնար, ի՛նչ պակաս...

— Խե՛, խե՛... էլ ի՞նչ, ավարճի... — կ՚նեգներ մայրը,— իմ տղեն, դու կտեսնես, յաման մարդ կեղնի... յաման մարդ...

— Ծեհաննա՛մ, դու էլ, քո տղեն էլ... Հովին ու բուքին տվիք էսքան տարվան իմ էմեք... իմ ծերության պիտի ընկնեմ ժամու տուռ...:

— Պարոց տուռ մերթար, մընկնավորիր[1], մա՛րդ,— կպատասխաներ մեղմաձայն մայրը ու կխաչակնքեր, իր «մարդ»ուն չար խորհուրդները մեկդի վանելու համար:

Իր հոր ու մոր միջև այդ հաճախակի վիճաբանությունները սկսած էին երբ պատանի էր ինք տակավին: Ատոմ, գիտեր, որ իր հայրն ալ նույնքան բոլորանվեր կսիրեր զինքը, բայց գեղջուկ ու անուս մշակի իր դատողությունը անըմբռնելի ու վտանգավոր կգտներ իր տղուն տարօրինակ զբաղումներն ու ձգտումները: Իրեն համար, ձեռքի աշխատանքն էր միայն որ իմաստ կներկայացներ ու արդյունավոր էր: «Հելալ» էր այն վաստակը միայն որ ձեռք կբերվեր ճակտի քրտինքով: Մնացյալը՝ պարապ էր, պարա՛պ ու վտանգավոր: Մայրը, սակայն, ամբողջովին համոզված ըլլալով հանդերձ իր մարդուն արդար խոսքերուն, կմերժեր կասկածի տակ թողուլ իր հոգեհատոր մեկ հատիկ զավկին իմաստությունը: Չար, վնասակար աշխատանք չէր կրնար տանիլ Ատոմը: Ու՝

— Լավ կեղնի, լավ կեղնի, մա՛րդ...— կեզրակացներ ան միշտ ու վիճաբանությունը վերջ կգտներ հակաճառողին գլխու թերահավատ շարժումներովը...

---

[1] *Չար խորհուրդներ մի ունենար, մի խենթենար:*

# Գ.

Ատոմ, վերմակին տակ այդպես կծկված, կհիշեր հին օրերը: Իր հայրը՝ միջահասակ ու ամրակազմ, սև մեծ աչքերով ու սև, թանձրաստվեր հոնքերով: Կըսեր թե վանեցի է, Ողվանց գյուղեն: Ու (անա ծովակին վրա *կեմիճի*, իր երիտասարդ տարիքին: Ու ինչպես լեռնականները կըլլան խրոխտ ու սեգ իրենց լեռներուն նման, ու մշակները հեզ ու տնաշեն իրենց կանաչ դաշտերուն պես, իր հայրն ալ եռվեփուն ու անհանդարտ էր Վանա Ծովակին հար և նման: Ու երկու բան կսիրեր ան՝ երգել ու հայհոյել: Կհայհոյեր երբ սրտնեղած էր, կհայհոյեր երբ սիրտն ուրախ էր, ու կհայհոյեր ան երբ ոչ մին էր և ոչ մյուսը: Հայհոյանքը— անմեղ ու մանկունակ— անհրաժեշտ ծամոնց մըն էր իր բերնին մեջ, ինչպես բոլոր ծովայիններու մոտ, գտնվին անոնք օվկիանոսներու թե լիճերու կամ լճակներու վրա:

Ու անոր հայհոյանքները կընդհատվեին միշտ երգերով: Հայհոյանքն ու երգը կհաջորդեին մեկզմեկու և օղակավորված էին այնքան սերտորեն, որ դժվար էր զանոնք բնորոշել: Իր բարկությունը կմարեր փրփուրի նման, կհանդարտեին Վանա ծովուն ջրերը, ու ան կսկսեր իր թավ ձայնովը երգել «խռոված յարի» մասին, որ «քեն էր ըրեր ու չէր գար»: «Արի՛, յա՛ր արի՛», կկանչեր ան ավելի հրամայող քան թախանձագին, բայց հանկարծ կիսատ կձգեր իր հրավերը, ու կանցներ այլ երգի մը.— «Հավքիկ վըր ծովուն»... Ու իր ձայնը կդառնար ավելի թրթռուն, ավելի հուզիչ: Ինքն ալ կարծես ըլլար հավք (թռչուն) մը որ կտռչորեր թև առնել ու սավառնիլ դեպի իր սիրելի ծովակը, որուն կարոտը ուներ այդքան երկար տարիներե ի վեր...

«Մարդը չհասավ իր մուրատին, Վանա ծովուն տեղ՝ Սեն գետը, անա...,— խորհեցավ Ատոմ դառնությամբ և աչքերը լեցվեցան: Պատասխանատվության ծանր, ճնշող զգացում մը խռովեց իր հոգին: Գլուխը դուրս հանեց վերմակեն ու կողմ փոխեց: Փոխեց նաև իր հիշողության առանցքը, մտածեց իր մորը՝ Հռիփի (Հռիփսիմե) մասին:

Ատոմի մայրը Սորբեցի էր: Սորբ, որ երկու եկեղեցի ուներ, Սուրբ Կարապետն ու Սուրբ Գավառակը: Ու մե՜ծ էր անոնց տունը, հարուստ, Հռիփի պապերը բոլորն ալ նշանավոր մարդեր էին: Անոնցմե մին՝ Ռես Կրպո (Կարապետ) անվանի էր իր հարստությամբն ու բարերարությամբը, մյուսը՝ Ռես Մամբրե, կանգիտանար իր այգիներուն սահմանները և ուրիշ մը՝ Նեմրութա Ավոն, հռչակավոր էր իր քաջությամբն ու խիզախությամբը ու երգված քյուրտերու լո-լո-ներուն մեջ: Կար նաև անոնց

ձենով Տեր Կրեն (Գրիգոր), որ քահանա էր իսկ և իսկ Աստուծմե ընտըր-յալ...

Հապա անոնց տո՛ւնը, անոնց արտե՛րը, անոնց էգիՆե՛րը... Հապա անոնց *կոկովի* ծառերը (ընկուզենի), որոնց *կթունները* (միջուկ) համբավավոր էին շրջակա գյուղերում ու նույնիսկ քաղաքին մեջ, իրենց պարարտությամբն ու համովը...

Աստոմ, կժպտեր հիմա, հիշելով այդ առասպելական «հարստության» մասին իր հորը թերահավատությունը և կձու արտահայտությունները.— «Ի՞նչ էգի, ի՞նչ ծառ տո՛... իմալ ա հյո՞ւր տկլոր եկար մեր տուն...

— Խե՛, խե՛, խե՛...

Առտվան մոտ Աստոմ կքնանար վերջապես:

Դ.

«Պոռալ կանչելը լա՛վ, բայց պետք է ընդունիլ որ դժվար է Զապելի կյանքը հոս», կխորհեր Աստոմ դառնությամբ: Սովորություն դարձած էր իրեն համար, տեղի ու անտեղի պոռալն ու կանչելը: «Ինք ալ քաշեց ու կքաշե, չէ՞, ինք ալ տառապեցավ ու կտառապի, չէ՞: Օրմը անոթի ձգե՞ց զիրենք, մերկ ու անպատսպար: Չէ՛, ամեն ինչ բրավ, ամեն ինչ փորձեց որպեսզի տնեցիներուն փորը կուշտ ու կռնակը տաք մնա: Ասկից լավը կըլլա, անշո՛ւշտ... ի՞նչ ընենք... մեռնի՞նք, մեռցնե՞նք...: Այսքան համբերեցինք, քիչ մըն ալ համբերենք...»:

Զապել չէր պատասխաներ իր ամուսնուն, բայց, որևէ պատրվակով մը, ինքն ալ իր կարգին կսկսեր պոռալ փոքրիկներեն մեկուն, մյուսին կամ բոլորին վրա.— «Փորձանքներ... այրեցեք զիս... ա՛խ, եթե դուք չըլլայիք...»:

Աստոմ գոց գիտեր շարունակությունը:

Զապել, մեկ շունչով պիտի փորձեր պարպել իր սիրտը ճնշող ամբողջ ծանրությունը: «Եթե դուք չըլլայիք, ա՛խ փորձանքներ, ես ի՞նչ գործ ունեի այս սատանային տեղը... Ինչո՞ւ չարչարվեի, ինչո՞ւ տառապեի, կյա՞նք է ասիկա, երեկ՝ հոն, այսօր՝ հոս, վաղն ալ Աստված գիտե թե ո՛ւր...»:

Բազմաթիվ անգամներ լսած էր Աստոմ այս խոսքերը: Երբեմն, պատասխանած էր ինքն ալ թե՝ «կերթաս *նե* գնա, քեզի հոս չկապեցինք *յա...»,* բայց հաճախ բավականացած էր սպառնական գլխու շարժումներով և դուրս ելած էր սենյակեն՝ դուռը ուժգնորեն փակելով:

Ամեն կռիվե վերջ, սակայն, Աստոմ կդատապարտեր ինքզինքը ու ի-

րավունք կուտար Զապելին: Աղջիկը ձգեր էր հայր ու մայր, քույր ու եղբայր այդպես հեռուն ու հետևեր էր իրեն, հայրենիք, Հայաստան երթալու համար: Հասեր էին Մարսել, դիմեր էին հոս ու հոն, սրվոր, նրվոր, քոլորին: «Հա՛ այսօր, հա՛ վաղը...», ու ամիսներ անցեր էին այդպես, անստույգ, մութ հեռանկարով: Յոթը հոգի պանդոկի մը մեկ սենյակին մեջ, վրա վրայի դիզված: Ինչ որ բերած էին Պոլիսեն, ինչ որ ունեին իրենց գրպանը շուտով սպառած էր և «անոթի մնալ»ու մտահոգությունը դարձած էր ամենօրյա մղձավանջ: Հետո, ամիսներուն հաջորդեր էին տարիներ: Չէին խոսեր այլևս իրենց համփորդության, հայրենիքի մասին, որպես անմատչելի երջանկություն: Չէին խոսեր, բայց Սառոմ կշարունակեր հուսալ թե վաղ կամ ուշ, օր մը անպայման կհաջողին երթալ: «Անքուժելի երազատես...»,— կծաղրեր ան հաճախ ինքզինքը, անմիջապես հետևցնելու համար սակայն թե երազը՝ պիտի դառնար իրականություն...

Հետո, կացությունը ավելի ևս վատթարացավ: «Անբաղձալի» ենկավեցավ իրենց բնակությունը Մարսիլիո մեջ: Կապվեցան անկողինները դարձյալ, կարպա, պնակ, գավաթ լեցվեցան մեկ քանի պայուսակներու մեջ ու «կարավան»ը ելավ համփա... անորոշ ուղղությամբ: Ու կարավանին մեջ կես «հոգի» ավելի... Զապել հինգ ամսու «լեցուն» էր արդեն...

Ե.

Անցնող երկու շաբաթներու ընթացքին Սառոմ ու Զապել դյուրավ հաշտվեցան իրենց նոր միջավայրին ու նոր կացության հետ: Զապելի վախը, թե՝ «այս հեռավոր գյուղին մեջ ի՞նչպես պիտի ապրինք, հայ չկա, լեզու, տարտ հասկցող չկա...»,— փարատեցավ շուտով: Մանուկ ու իր կինը՝ Ժանին, անցնող այդ տասնըհինգ օրերու ընթացքին նորեկներուն հետ վերաբերվեցան որպես հին բարեկամներ, որպես ընկերներ...

Ընկերնե՞ր...

Անպատում երանություն մը զգաց Սառոմ, երբ իրենց երկրորդ կամ երրորդ խոսակցության ժամին «գամառատ» կոչեց զինքը, փոխանակ «պարոն»ի: Մոռցավ պահ մը ամեն ինչ, կուրծքը ուռեցավ հպարտությամբ ու քաղցր խաղաղանք մը պատեց իր ամբողջ էությունը: Հետո, հանկարծ, սառնեղեցավ ու շիկնեցավ: Իրավունք ունե՞ր ընդունելու այդ կոչումը, չէ՞ր շահագործեր արդյոք անոնց անգիտությունը: Ի՞նչ կրնար ըսել սակայն, թե «գամառատ» չէ, այլ «անպաշտոն» ընկեր մը միայն... գաղթական ընկեր մը: Ի՞նչպես բացատրել, սակայն, հապա եթե սխալ

հասկնային ու դասալիք մը նկատեին զինքը: Որոշեց ձայն չհանել: Ու-
նետո, երբ խոսակցությանց ընթացքին, Ժանին միշտ ալ կրկնեց «գամա-
ռատ»ը, Ատոմ բնական գտավ այդ կոչումը և չչիկնեցավ այլևս:

Համակրելի զույգ մը կկազմեին Մանուկ ու Ժանին: Առաջինը, հայու
հարազատ ու անեղծ մնացած տիպար մը, միջահասակ ու ամրակազմ,
թուխ ու առատ մազերով, սևաչյա ու լայնահակատ: Ամեն գիծ հստակ
էր ու չեշտված անոր դեմքին վրա: Կխոսեր հատիկ հատիկ, գրեթե դըժ-
վարությամբ, ֆրանսերեն կամ իր մայրենի լեզվով: Ժանին, կատարյալ
հակապատկերն էր իր ամուսնուն: Սլացիկ հասակով ու երբիրան, ոսկի
մազերով ու կապուտաչյա: Գիծ գրեթե չկար իր դեմքին վրա: Գեղեցիկ,
շատ գեղեցիկ չէր, բայց անկարելի էր չհամակրիլ իրեն առաջին ակնար-
կով իսկ: Միշտ ժպտուն, ծիծղուն ու շաղակրատ խոսքը, անվերջանալի
երգ մըն էր կարծես իր շրթներուն վրա, լույսի և լավատեսության ան-
վերջանալի երգ մը:

Ատոմ, առաջին օրն իսկ նկատած էր, որ Ժանիի ընկերակցությու-
նը բարերար ազդեցություն մը կգործեր Զապելի ջղազրգիռ տրամադրու-
թյան վրա: Ան հանույքով կպատասխաներ միշտ նոր դրացուհիին ան-
վերջանալի հարցումներուն ու ինքն ալ կսկսեր ժպտիլ, խնդալ ու կատա-
կել: Տասնհինգ օրվա ընթացքին մտերիմ բարեկամուհիներ եղած էին
անոնք, կարծես երկար տարիներէ ի վեր ծանոթ իրարու:

Ինչ որ առավելապես կուրախացներ Ատոմը, Զապելի վերազարթ-
նող ջերմ հետաքրքրությունն էր իրենց ոդիսականի նպատակակետին՝
Հայրենիքի հանդեպ: Վերջին մեկ քանի ամիսներու ընթացքին հանա-
խակի կրկնվող տրտունջի և հուսալքության արտահայտությունները ի-
րենց տեղը տված էին այժմ նոր խանդավառության և նոր ծրագիրներու:

Անգամ մը Ժանին հարց կուտար թե ինչո՞ւ հեռացած էին իրենց
ծննդավայրեն՝ Թուրքիայեն: Ատոմ վախցավ պահ մը որ Զապել կվեր-
սկսի իր երեմիականներուն:

«Ամեն բան ունեինք, Ժանին, ամեն բան,— կսկսեր Զապել,— բայց
երջանիկ չէինք հոն, չէինք կրնար ըլլալ... Հոն ծնած էինք, այո՛, հոն
մեծցած, տուն տեղ եղած էինք... բայց օտար կնկատվեինք... Մարդ իր
հայրենիքին մեջ միայն կրնա երջանիկ ըլլալ, չէ՞»:

Ժանին գլխու մեքենական շարժումներով կհաստատեր Զապելի կար-
ծիքը, բայց հետո կավելացներ լուրջ, գրեթե տխուր շեշտով մը.

«Անշուշտ, որ մարդ իր հայրենիքին մեջ միայն լիովին երջանիկ
կրնա զգալ ինքզինքը, բայց ո՛չ միշտ, ո՛հ, ո՛չ միշտ... Մեր հայրենիքին
մեջ կզգնվեինք և սակայն դժբախտ էինք գրավման շրջանին, չէ՞... Ու
գիտե՞ս թե ի՛նչեր զոհեցինք որպեսզի ազատագրվի մեր հայրենիքը...»:

«Այդ ուրիշ, այդ ուրիշ,— կպատասխաներ Զապել ու կշառագուներ, որովհետև իմացած էր թե ժանինի երկու եղբայրները, գրեթե պատանի, նացի զավթիչներու դեմ կռվելու համար բարձրացած էին *մաքի* ու չէին վերադարձած... — բայց, մենք, խաղաղության մեջ անգամ չէինք կըրնար երջանիկ ըլլալ հոն... օտարներ էինք»:

«Ամեն պարագայի տակ, Զապել,— չարաճճի ժպիտով մը ընդմիջեց ժանին — հոգ մի՛ ըներ, «եկող»ը հոս ալ մնաք, հայրենիք ալ երթաք երջանիկ պիտի ըլլա... բոլորը երջանիկ պիտի ըլլան այլևս... տառապանքն ու դժբախտությունը գետնին տակը անցան Հիթլերի հետ... Հա՛, ի՞նչ պիտի դնեիք անունը, զամառոտ Ատոմ,— հարցուց ան հանկարծ:

«Մասի՛ս,— փութաց պատասխանել Զապել մարտահրավերի շեշտով մը:

«Ի՞նչ անուն է Մասիս... — հարցուց ժանին իր ամուսնուն, Զապելի այդ խիստ արտահայտութենեն զարմացած:

«Մեր մայր հայրենիքի լեռն է... մեր երկրին խորհրդանշանը,— պատասխանեց Մանուկ իր կարգին հպարտ արտահայտությամբ մը...:

«Օ լա՛ լա՛... սա շովեններուն նայեցե՛ք...,— կատակեց ժանին,— նոր իմացա, որ լեռներու անունով կարելի է կոչել մարդիկը...,— և հանկարծ, Զապելի դառնալով — հապա՞ եթե հոս մնաք... ի՞նչ պիտի անվանեք:

«Ո՛չ ո՛չ, ո՛չ ո՛չ,— պատասխանեց Զապել վճռական,— կերթանք... անպայման կերթանք, չէ՞... — դարձավ ան իր ամուսնուն:

«Այո՛, այո՛, կերթանք, հավանաբար կերթանք,— պատասխանեց Ատոմ ու ապա Մանուկի դառնալով հարցուց.

*Պըլոթ* մը խաղա՞նք... ընկեր Մանուկ...»:

## Զ.

Նոր շաբաթներ անցան:

Ատոմ, իր ամենօրյա դիմումներեն կվերադառնար ապարդյուն: Ու ամեն երեկո, Զապել, պարտեզին դռան առջև կդիմավորեր իր ամուսինը և առանց բարևին պատասխանելու կհարցներ.

«Նոր լուր մը կա՞... ի՞նչ ըսին...»:

Ու ամեն երեկո, Ատոմ կկրկներ նույն հանկերգը:

«Պատասխանի կսպասեն... չուշանար...»:

Չուշանա՞ր...

Ու ամեն օր Փարիզի պաշտոնաթուղթեն բազմաթիվ արձանագրվողներ դուրս կելլեին այլազանորեն մեկնաբանելով այդ նույն պատասխանը:

«Զուշանար...»,— ցնծուն ու երջանիկ արտահայտությամբ կավետեր իր ալեհեր կնոջ ռուս ծերունի մը, որ նոր դիմում կատարած էր ներգաղթի...

«Զուշանա՛ր...»,— վստահություն կուզեին ներշնչել իրենք իրենց հայ, ռուս, ուկրաինացի, մոնղոլ, վրացի և այլազգի նախկին կարմիր բանակայիններ, որոնք մեկ քանի ամիսներե ի վեր լեցուցած ու ստորագրած էին իրենց թուղթերը և անհամբերությամբ կսպասեին արտոնության, որպեսզի ժամ առաջ վերադառնային իրենց հավանաբար քանդված օջախները ու մասնակցեին վերակառուցման աշխատանքին...

Ու՝

«Զուշանա՜ր...»,— կես հեգնական ու թերահավատ կկրկնեին ու գլուխ կերերցնեին ուրիշներ, որոնք կորսնցուցած էին ժամանակի ըմբռնումը...

Որ դասուն մեջ ալ գտնվեին, սակայն, ներգաղթի արձանագրվողները մեկ քանի օր վերջ զիրար կվերագտնեին սպասման ընդարձակ սրահին մեջ, ու բոլորին աչքերուն մեջ ալ կպճլտար հույսի նույն ցոլքը, որ ավելի ուժեղ կփայլեր, կամ կմարեր, ընդունելության սրահեն դուրս ելլելե հետո...

Ատոմ, իրենց «տան» սենյակեն լավ կճանչնար սպասման սրահը: Շենքը, հին ազնվական ընտանիքի մը պատկանած էր հավանաբար: Քանդակազարդ և յուղաներկված առաստաղով, հայելապատ և բարձր պատուհաններով, որոնք փակված կմնային հաճախ թավշյա թանձր վարագույրներով: Սրահը կմնար միշտ կիսամութի մեջ ու հաստ գորգերը կխեղդեին ամեն ձայն: Ներկաները, համակերպած շրջապատին, ցանցառ փսփսուքներով միայն կխոսակցեին իրարու հետ: Ատոմ, նստած էր բոլոր բազկաթոռներուն և աթոռներուն վրա: Գիտեր թե ո՛րն էր անոնցմե ամենեն հանգստավետը, ամենեն քնաբերը: Ուշի ուշով դիտած էր բոլոր արձանիկները և ուղղանկյուն քառանկյուն թաղարներու տունկերուն անուններ փնտռած էր ու չէր գտած: Ան, հաճախ, ինքզինքը դիտած էր նաև պատերու ամբողջ բարձրությունն ու լայնքը ծածկող հայելիներուն մեջ ու զարմացած, որ այդքան փոխված էր ինք վերջին երկու տարվան ընթացքին: Հետո, մխիթարած էր ինքզինքը, խորհելով թե էլեկտրական մեքենան լավ չէր ածիլեր ու կավրեր երեսներուն մորթը... Կմերժեր հաստատել թե սպասումի տառապանքը կսպառեր զինքը, կըմերժեր հաստատել թե կտառապեր ինք...

Օր մը, այդպես, ձախ անկյունի բազկաթոռին մեջ թաղված, Ատոմ կփորձեր օրվան թերթին խորագիրները կարդալ, երբ սրահեն աճշչուկ քայլերով ներս մտավ մեսիյո Իվանը: Ատոմ լավ կճանչնար զայն: «Ճեր-մակ» ռուս մըն էր, ճերմակ մազերով, վաքսունը անց: Ան ալ, երկար ամիսներե ի վեր կուգար ու կերթար, առանց որևէ արտահայտության: Հատուկոտոր նախադասություններով պատմած էր իր կյանքը Ատոմի: Ավելի քան երեսուն տարիներե ի վեր կզտնվեր Փարիզ, իր կնոջ հետ: Հոկտեմբերյան հեղափոխութենեն անմիջապես հետո, այդ հեղափոխու-թյան դեմ կովելե ու պարտվելե վերջ, Իվան ու իր կինը հեռացած էին Ռուսիայեն ու դարձած էին գաղթական: Անցած էին Թուրքիա, հետո Իտալիա, և ի վերջո հաստատված էին Փարիզի մեջ... Ամեն ինչ բրած էր Իվան ապրվելու համար: Եղած էր դռնապան—շնորհիվ իր թիկնեղ հա-սակին,— հետո թերթ ծախած էր Փարիզի փողոցներուն մեջ, ապա դար-ձած էր թաքսիի շոֆյոր, և այդպես ալ մնացած էր: Զավակնե՞ր, ո՛չ, չէին ունեցած...

· «Զավակ չունեցանք մենք, ո՛չ, բայց հո՛ն, Մոսկվայի մեջ ունիմ երեք եղբորորդիներ, կռիվներու ընթացքին եղբայրս ինկավ իմ կողքիս... Կինը մեռած էր արդեն... Փախուստի ժամանակ չկրցանք փնտռել ու գտնել որբերը, կրցանք միայն մեր հոգիները ազատել, ապա «ազա-տելու» համար նաև Ռուսիան... Մեր ընտանիքը զինվորականներու գեր-դաստանե մը կհառաջանար, բայց իմ երեք եղբայրներս, երեքն ալ ին-ժեներներ եղեր են... ու լավ է այդպես...

«Ինչո՞ւ...»— հարցուցած էր Ատոմ բան մը ըսած ըլլալու համար:

«Լա՛վ է այդպես,— կրկնած էր Իվան, Ատոմի հարցումը կարծես չլսելով— ինժեներները շինողներ են, կառուցողներ... Ու մեր հայրենի-քին մեջ շատ բան քանդեցին անիծյալ թշնամիները...

«Ինչո՞ւ մինչև հիմա սպասեցիք, ինչո՞ւ ավելի առաջ չմեկնեցաք», ջեշտակի հարցուցած էր այս անգամ Ատոմ:

«Ինչո՞ւ...,— զարմացած արտահայտությամբ կրկնած էր Իվան,— չէինք կրնար... Մենք ալ, ատենին, ավերել ու քանդել ուզած էինք մեր հայրենիքը, մենք ալ հանցապարտներ էինք աններելի... բայց, հայրենի-քը, կտեսնե՞ք, ներեց մեզի, օրհնյա՛լ ըլլա ան...»:

Ատոմ, իր ակնարկը տարած էր ուրիշ տեղ, ձեռքի թերթեն դեպի առաստաղ, չտեսնելու համար արտասուքները, որոնք կգլորեին Իվանի ոսկրուտ այտերեն վար...

Այդ առավոտ, Իվան, սպասման սրահեն ներս մտավ վարանոտ քայ-լերով: Գլխու իր սովորական շարժումով բարևեց ներկաները ու տեղ փնտռեց: Բազկաթոռներն ու աթոռները գրավված էին բոլորն ալ: Հասա-

չացավ կիսամութին մեջ, մտացիր ու տարտամ ակնարկով, չոփյորի իր քասքերը մատներուն մեջ չարչրկելով: Հառաջացավ այդպես ու հանկարծ ինքզինքին հետ դեմ հանդիման եկավ հայելիին մեջ ու չճանչցավ ինքզինքը: Կարծեց թե ուրիշի մը կզարնվի, ետ նետվեցավ շփոթած ու կըմկըմաց.

«Փառտո՛ն, փառտո՛ն...»:

Ներկաներեն շատեր ծիծաղեցան բարձրաձայն: Ատոմ նեղվեցավ, կարծես թե ինքն ըլլար անոնց ծիծաղին շարժառիթը ու ձայնեց.

— Մեսիյո Իվան, եկե՛ք, հոս քովս տեղ կա...

Իվան քունեն ընդոստ զարթնող մեկու մը պես, անիմաստ նայվածքով մը դարձավ Ատոմի կողմը, ճանչցավ զայն ու մեքենական քայլերով մոտենալով նստեցավ ցույց տրված տեղը:

— Ես ալ անցյալները խաբվեցա այդպես,— ստեց Ատոմ,— չեմ գիտեր ինչու այս վարագույրներն ալ միշտ գոց կմնան, աջդ ձախդ չես տեսներ... Մեր հոգին նեղն է արդեն, այս մթությունն ալ ավելին... կոլուա՞զ մը...

Սիկարեթներու ծրարիկը երկարեց Իվանի: Իր խոսակիցը սակայն, կարծես չէր լսած զինքը, չէր տեսներ զինքը ու չէր տեսներ մյուսները: Ճերմկած մազերը ճակտին ինկած, բերանը կիսաբաց, իր գլուխով ու ամբողջ կես մեջքովը առաջ ծռած էր մեկնումի ազդանշանին սպասող վազքի մրցորդի մը նման ու կսպասեր.. Կսպասեր, որ ընդունելության սրահին դուռը բացվեր ու ներս կանչեին զինքը:

«Երկար պիտի սպասե խեղճը,— խորհեցավ Ատոմ ու ետ քաշեց սիկարեթներու ծրարիկը: Փորձվեցավ հատ մը վառել, ապա վախցավ թե կանհանգստացնե Իվանը, գրպանը դրավ: Ու համրեց սրահին մեջ գտնըվողները... տասնմեկ սպասողները ու ապա Իվանը...

Իվան, ինքը սակայն, կսպասեր... Ու իր այդ սպասումը, այդ օր, արտասովոր ու բացառիկ բան մը ուներ իր մեջ, չէր նմաներ նախկին օրերու հանդարտ ու համբերատար սպասումին: Սահմանին ծայրը հասած էր, տեղ չկար այլևս անդին... Հավանաբար իր վերջին օրն էր սպասման սրահին մեջ, վերջին օրը նաև՝ որպես ռուս մարդ ապրելու իր վերազարթնող ձգտումին: Անվերադարձ կերպով դուրս պիտի ելլեր ան, պիտի դառնար իր թաքսիին ու պիտի ապրեր որպես... հայրենազուրկ անհատ մը:

«Մարդը հուսահատած է այլևս, երկարեցավ, կերկարի՛ կոր,— դառնությամբ եզրակացուց Ատոմ,— կյանքին մինչև վերջը այս դրան առջև պիտի չսպասե յա...»:

Բայց, հանկարծ, բացվեցավ ընդունելության սրահին դուռը ու հայտ-

նրվեցավ պաշտոնյան իր պաշտոնական ժպիտով: Ատոմ, մոռցավ անմիջապես Իվանը, մոռցավ Իվանի թախսին ու ոտքի ցատկելով մոտեցավ պաշտոնյային, միասին ներս մտնելու համար: Այս վերջինը, սակայն, ճիշտ այս պահուն, երբ կպատրաստվեր սենյակ մտնել, նշմարեց Իվանը: Իր պաշտոնական ժպիտը աննետացավ անմիջապես, դեմքին վերապահ արտահայտությունը փոխվեցավ ամբողջովին ու անկեղծ հուզումով թրթըռացող ձայնով մը կանչեց Իվանը.

«Ներողություն պարոն,— դարձավ ան Ատոմի,— հաճեցեք մեկ վայրկյան սպասել, մե՛կ վայրկյան միայն... Պարոն Իվանի թուղթերը եկած են, մեկ շաբաթեն կմեկնի... թուղթերը տամ, որ պատրաստվի...»:

Իվան խոյացավ դեպի պաշտոնյան, բռնեց անոր ձեռքերը ու փորձեց տանիլ իր շրթներուն: Կռիվ մը սկսավ երկուքին միջև, մին վար կքաշեր, կամոքեր, մյուսը վեր կքաշեր, կաղերսեր... ու դուռը փակվեցավ այդպես, երկուքին վրա:

Ատոմ, աչքերը փակեց, ակռաները սեղմեց ու սանդուղներեն վար վազելով դուրս ելավ պաշտոնատունեն: Դուրսը ան ավելի հանգիստ, կրնար սրբել իր արցունքները...

Է.

«Պարո՛ն,— Զապել այսպես կկոչեր իր ամուսինը ամեն անգամ, որ սրտնեղած ըլլար,— պարո՛ն, քիչ մը դրամ պետք է տաս...»:

«Նարե՛ն,— բողոքեց Ատոմ,— ես տպարանը կաշխատիմ, այո՛, բայց դրամ չեմ տպեր, աղջի՛կս, երեկ տակավին հազարնոց մը տվի...»:

«Խելքդ սիրեմ, պարոն,— իր բարկությունը հազիվ զսպելով պատասխանեց Զապել,— հազարնոցը ի՛նչ է որ... դյուրի՞ն կարծեցիր յոթը փոր կշտացնել... Ուրիշ պակասներ չունի՞նք...»:

«Ի՞նչ պակաս, հանըմ...»:

«Ի՛նչ պակաս, ի՛նչ պակաս,— ձայնը բարձրացուց Զապել,— ան որ է դուրս պիտի ելլե... հողին վրա՞ պիտի պառկի... մե՞րկ պիտի մնա... օրորոց չուզե՞ր, շոր չուզե՞ր...»:

Իրավունք ուներ անշուշտ Զապել, մոտեցած էին իր տղաբերքի օրերը: Փորձեց հանդարտեցնել զայն:

«Կեցիր նայինք, ինչո՞ւ կանապարես, մեկ քանի շաբաթ ունիս տակավին...»:

«Ջերմո՞վդ գրեր ես..., —համբերությունը հատած պոռաց Զապել,— ի՞նչեն գիտես, որ վաղը, կամ այս գիշեր իսկ պիտի չծնի... օ՞ր նշանակած ես...»:

«Լա՛վ, լա՛վ,— կարճ կապեց Ատոմ,— վաղը երեկո բան մը կընենք, բարոնեսս կանխավճար մը կուզեմ... Հիմա մի՛ սրտնեղիր... Ի՞նչ պիտի ունենք...»:

«Վաղը իրիկուն, վաղը իրիկուն, Աստուծո վաղը չի լմննար, Ատո՛մ», — ըսավ Զապել ճանդարտ ու ճամակերպած արտաճայտությամբ, ինչ որ զարմացուց և մտաճոգեց Ատոմը:

«Ի՞նչ ունիս, աղջիկ,— ճարցուց ան, ինքն ալ մեղմ ձայնով,— լավ չե՞ս զգար ինքզինքդ...»:

Զապել չպատասխանեց և ուղղվեցավ դեպի խոճանոց: Ատոմ ճետևվեցավ իր կնոջ, խոճեմություն ճամարելով չարծարծել ճարցը: Ներսը, Ատոմի ճայրն ու մայրը և երեք փոքրիկները ճավաքված էին վառարանին շուրջ: Փոքրիկ մանչը վար ցատկեց անմիջապես աթոռեն ու իր աջ այտը երկարելով ճորը, ճարցուց.

— Պապա, *ճելվա* բերի՞ր...

Ատոմ սեղանին վրա դրավ փոքրիկ ծրարը, որ վայրկյան մը ճետո կովախնձոր էր դարձած արդեն երեք փոքրիկներուն մատներուն մեջ: Ծրարը ամուր կապված էր, չէին կրնար քակել: Սկսան վիճաբանիլ, գիրար ճրմշտկել, ճվճվալ՝ «ես պիտի բանամ... ո՛չ, ե՛ս...»: Ատոմի գըլխավոր ճաճույքն էր այդ տեսարանը: Տղոց սանձազերծված այդ ուրախությունը կերջանկացներ զինքը ու վստաճություն կներշնչեր իրեն, թե տակավին կրնար երջանկացնել ուրիշները, ճոգ չէ թե մանուկներ ըլլային անոնք: Առանց այդ ճաստատումին, կյանքը անիմաստ ու տաղտկալի կըլլար իրեն այդ օրերուն, երբ ամեն ինչ դարձած է տարտամ, ամեն ինչ կտարուբերեր «կա» ու «չկա»ին միջև:

Ինք ալ կգիտակցեր, անշուշտ, որ ինքնախաբեություն մըն էր այդ ճաստատումը ու անճամապատասխան իրականության, թե՝ երջանկության պաճիկներ տալ միայն փոքրիկներուն, երբ անդին... մեծերը, խոժոռ ու պաղ արտաճայտություններով կճաստատեին, թե իրենք շատ ճեռու էին երջանիկ նկատվելե: Այս լռելյայն դիտողությունը կշղայնացներ զինքը, կուզեր ճերքել, բացատրել, կռվիլ... բայց ինքն ալ ճոգնած էր այլևս... կբավականանար անուշի կապելով լուծել ճարցը և լռեցնել իր խիղճը. «Կկարգադրվի, ամեն ինչ կկարգադրվի... վաղը, մյուս օր անոնք ալ, ես ալ, բոլորս ալ երջանիկ կըլլանք անպայմա՛ն...»:

Ճաշեցին: Փոքրիկները, իրենք ալ տպավորված մեծերու լուրջ արտաճայտություններեն, լռիկ մնջիկ անցան իրենց սենյակը, քնանալու: Ատոմ մեքենաբար ոտքի ելավ ու վառարանին վրա սկսավ պատրաստել թրքական սուրճը:

«Իմ գավաթս մի՛ լեցներ, չեմ կրնար խմել»,— ըսավ Զապել, ու

ծերերուն «գիշեր բարի» մաղթելով մոտեցավ սենյակին դռան, կեցավ պահ մը, դարձավ դեպի ամուսինը, մարած աչքերով դիտեց զայն, շրթները սարսռացին, ապա բացավ դուռը ու մտավ ներս առանց բառ մը արտասանելու: Սուրենին դզալը անշարժացավ Ատոմի մատներուն մեջ:

«Ի՞նչ ունի հանըմը,— հարցուց ան բարկության կեղծ շեշտով մը,— նորե՞ն հովերը եկած են...».:

«Երես ունիս ու կխոսիս»,— սաստեց մայրը պոռալով, ապա զգույշ քայլերով մոտեցավ իր տղուն, բռնեց երկու թևերեն ու իրեն քաշելով մեղմ, գրեթե անլսելի ձայնով մը շարունակեց, թե խելքը տուն պետք է կանչե, հանի ուշ չէ: Զապելի փրկության օրը մոտ է այլևս, այսօր կամ վաղը կծնի, ի՞նչ բրավ ինք, հիվանդանոց փնտռե՞ց, բժիշկ, տատմեր գտա՞վ...

Խո՛, այդպես անտեր... անտիրական պիտի չթողուր աղջիկը, եթե իրենց բոլորին չէր մեղքնար, գոնե պետք էր մեղքնար իր զավակներուն, հապա՞ եթե որբ մնային...

«Ինչեր կըսես, մամա,— ընդմիջեց Ատոմ շվարած ու մտահոգված,— ի՞նչ է եղեր, ինչո՞ւ որբ մնան, ես վաղն իսկ կկարգադրեմ ամեն բան...»:

Ազատեց իր թևերը մորը մատներուն սեղմումեն ու դուրս, պարտեզ ելավ: Անաստղ ու մռայլ էր երկինքը: Զոր ցուրտ մը խածավ իր երեսը և աչքերը տամկացան: Վեր առավ իր բանկոնին օձիքները, գլուխը փորձեց խրել անոնց մեջ ու սկսավ շրջագայիլ: «Վաղը կկարգադրեմ, վաղը կկարգադրեմ, բայց ի՞նչպես...»,— հարցուց ան ինքզինքին: Հիվանդանո՞ց. ըսած էին, թե «թուղթ» չունեցողներու համար հիվանդանոցներուն գինը շատ բարձր էր... թող որ եթե ցած ալ ըլլար, ինք չէր կրնար բան մը վճարել: Բժի՞շկ. «Փարիզ բարեկամ բժիշկներ ունինք, հեռախոսե, կուգան» հավաստիք տված էին իրեն ընկերներ: Գրպանի նոթատետրին մեջ ուներ անոնց մեկ-երկուքին հեռախոսի թիվը: Իսկ դայակը, Ժանինի կարծիքով, միշտ կարելի էր կանչել, թեև կբնակեր գյուղին մյուս ծայրը, ու երկու ժամի կկարոտեր երթևեկը...

Պարտեզեն երկու քայլ անդին Սենը կվազեր սարսափազդու աղմուկով: Ատոմ, առաջին անգամն էր, որ կլսեր վազող ջուրի մը ձայնը, այդքան ուժգին ու այդքան սպառնագին: «Տարօրինակ բան,— խորհեցավ ան պարտեզեն դուրս ելլելով ու դեպի գետեզր մոտենալով, ցերեկները ո՞ւր կերթա այս ձայնը, ինչո՞ւ չենք լսեր, գիշերնե՞րը միայն կվազե արդյոք այս ջուրը...»: Տիծաղեցավ ինքն իր վրա: Պա՛րզ էր, չէ՞... օր ցերեկով, կենդանի բնությունը իր հազարումեկ երակներու զարկովը կխեղդեր ջուրին ձայնը. հո՛ս, խաղացող մանուկներու և թռչուններու

եվեվոցը, ֆիչ մը անդին բակին նավերը կկտկտային, ավելի հեռուեն կլվեր ջուներուն հաչյունը, հապա՛ գետնի ու ծառերու կանաչներուն մեջ այլացեղ ու այլերանգ միջատներու աղմուկը... «Առանձին մնացեր, ապարեզ գտեր, ինքզինքը ցույց կուտա հիմա...»։ Հեգնական փիլիսոփայեց Ատոմ և սկսավ իջնել դեպի ավելի վար, ջուրին եզերքը...

Մութ էր։ Տեղ փնտռեց նստելու համար, թաց էր գետինը։ Սկսավ հառաջանալ... հառաջանալ... Կանգ առավ հանկարծ ու ետ դարձավ։ Հասավ իրենց պարտեզին առջև, լույսերը մարած էին... «Ներս մտնե՞մ, չմտնեմ... չմտավ։ Շարունակեց հակառակ ուղղությամբ հառաջանալ այս անգամ... «Աննպատակ այսպես շատ քալեցիր կյանքիդ մեջ, տղա՛ս...»,— խորհեցավ ան հանկարծ, բայց անմիջապես ծիծաղեցավ կատակի վերածելով այդ հաստատումը։ Զգաց, որ կխուսափեր, փախուստի ճամփա կփնտռեր նույնիսկ ինքզինքեն։ Ըմբոստացավ։ «Ինչո՞ւ համար աննպատակ, ծո՛, ինչո՞ւ համար...»։ Այդ չեչտակի հարցումը, այդպես ճակատաբաց, հանդարտեցուց զինքը։ Իր կյանքը աննպատակ չէր եղած, թող Զապելը, իր ծնողքը ու մոտիկ կամ հեռավոր բարեկամներ խծբծեին զինքը, ինքը լավ գիտեր թե ինչ փնտռած էր ու ինչ կփնտռեր...

— Տո՛ տղա, Ատո՛մ, Ատո՛մ... արի՛, տո՛ տղա»,— լսվեցավ հանկարծ հեռուեն իր հորը ձայնը։ Կարծես բան մը փրթավ իր կուրծքին մեջ։ Շունչը բռնվեցավ, ուզեց պատասխանել, պոռալ, բայց չհաջողեցավ... ու խենթի պես սկսավ վազել դեպի ձայնին եկած կողմը... Հանկարծ, ոտքը կարծր բանի մը զարնվեցավ ու ֆիչ մնաց վար, ջուրին մեջը իյնար։ Հայհոյեց ու ճամփուն վրա բարձրացավ և վերսկսավ վազել, ավելի արագ այժմ։ Հայրը միշտ կշարունակեր պոռալ իր անունը ու կարծեց լսել նաև մորը ձայնը, մեղմ ու պաղատագին։ Խոհանոցին լույսը վառած էր ու դուռը բաց։ Առաջին խոսքը եղավ սաստել իր հայրը։ «Ինչո՞ւ այդպես կպոռաս, մարդ Աստուծո, բոլորը պիտի արթնցնես, խենթեցա՞ր, ի՞նչ... Ու ներս մտավ դանդաղ քայլերով։

Ներսը, Զապել, երկու ձեռքերը փորին վրա, շարունակ աջ ու ձախ երերալով, մե՛կ անդին կերթար, մե՛կ ասդին կուգար, անձայն ու անշշուկ։ Թույլ ու երկայն ներմակ գիշերազգեստը, իրար խառնված ու գունատ դեմքը ուրվականի մը երևույթը տված էին անոր։ «Օֆելիային կնրմանի կոր...»,— եղավ Ատոմի առաջին մտածումը, բայց անմիջապես զգաց իր աններեթ խորհուրդը, ամոթեց ինքզինքը ու իր կնոջ մոտենալով. «Ի՞նչ ունիս, Զապել, ի՞նչ ունի՞ս»,— հարցուց մեղմ ու մտահոգ չեչտով մը։

Զապել կանգ առավ ու դադրեցուց իր երերալը։ Գլխու շարժումով

մը մերժեց կեսրոջը ցույց տված աթոռը ու իր ամուսնուն մոտենալով գլուխը մոտեցուց անոր կուրծքին ու փսփսաց.

— Մի՛ վախնար, ջանիկս, չվախնաս հա՜... ջուր սկսավ վազել...

Ատոմի աչքերը մեծ բացվեցան, դեպի ետ ընկրկում մը ունեցավ ու դիտեց իր կինը: «Խելքի՞ն եկավ արդյոք»,— խորհեցավ ան սարսափահար:— Ջուր սկսավ վազել.. Դուրսի, Սենի աղմուկե՞ն կվախնար արդյոք...»:

«Ի՞նչ ջուր աղջիկս, ո՞ր ջուրը սկսավ վազել,— կմկմալով հարց տվավ ան:

Դառն ժպիտ մը ուրվագծվեցավ Ջապելի դալուկ դեմքին վրա: Դառն ու արգահատանքի ժպիտ մը: Կարելի՞ բան է, որ մարդ երեք զավակներու տեր ըլլա և չհասկնա՜, չհասկնա՜...

«Աղջի, հոգուդ մատաղ, կնա՛ երկնցիր...»,— մեղմ այլ հրամայական շեշտով բսավ Ատոմի մայրը ու ապա իր զավկին դառնալով, շարունակեց զայրալիր.

«Կյորպեկյոր[1] եղնի քո ծնող, տղա՛, ի՞նչ սև օր աշխարհ ես եկեր... Ի՞նչ ես քարացեր կեցեր, տե՛, կնա տատմերն կանչե...»:

«Կամաց խոսեցեք, պզտիկները կարթննան, կվախնան, խայտառակ կըլլանք,— ընդմիջեց Ջապել մեղմորեն ու ոտքին մատներուն վրա կոխելով ներս մտավ, ձեռքերը միշտ փորին վրա:

Ատոմ հառաջացավ քնաշրջիկի մը պես ծիգ քայլերով, մեքենաբար բացավ խոհանոցին, ապա պարտեզին դուռը ու իջավ փողոց: Դուրսի պաղ օդը սթափեցուց զինքը: Տեղն ու տեղը կեցավ պահ մը աջ ձեռքը տարավ ճակտին ու հարց տվավ ինքզինքին, թե ինչ պիտի ըներ: Պարզ էր, սակայն: Պիտի վազեր դրացի նպարավաճառին ու հեռաձայներ: Այդ գյուղին մեջ, սակայն, «դրացի»ները կգտնվեին իրարմե տասնըհինգ, քսան, նույնիսկ ավելի վայրկյաններով հեռավորություններու վրա: Փոքրիկ հասցեատետրին մեջ ուներ դայակին հեռաձայնին թիվը: Փնտռեց տետրակը, հոն էր, լուցկիի փոքրիկ գրպանին մեջ: Սկսավ վազել, արա՛գ: Հարյուր քայլ անդին, կանգ առավ, դժվարացած շնչառությամբ: «Ապուշ տղա, ապո՛ւշ,— կշտամբեց ինքզինքը, —մուխդ մարած է եթե սա սիկարեթեն չհրաժարիս, քանի մը տարիեն լմնցած մարդ մը պիտի ըլլաս...»: Կուրծքին մկանները պրկեց ու խորունկեն շունչ մը քաշեց, բայց հանկարծ սուր ցավ մը զգաց կուրծքին մեջ, ձախ կողմը, վարի դին: «Սիրտս է, կուրծքս է, չեմ գիտեր, բայց բան մը կա, որ *Հապը կըլլած* է այստեղը», խորհեցավ ան դառնությամբ ու ապա, հանկարծ, ուխ-

---

[1] *Գերեզմանե գերեզման նետվի, գերեզմանին մեջ հանգիստ չունենա։*

տեց վճռական. «Եթե այս փորձանքը ցատկեցնենք, կձգեմ ծխելը խաչ ո՛ր…»:

Քայլերը արագացուց դարձյալ: Գիտեր, թե բոլորովին անիմաստ ու ծիծաղելի էր այս ուխտն ու այդ «խաչոր»ը, դրժված բազմաթիվ անգամներ արդեն: «Այո՛, բայց,— փորձեց արդարացնել ան ինքզինքը,— փորձանքներն ալ միշտ անպակաս եղան մեր գլխուն, ծխելն ալ որ չըլլա, ի՞նչպես տանիլ այսքան տարտն ու սրտնեղությունը…»:

Թանձր մթություն մը կտիրեր չորս դին ու ինչքան ալ զորավոր ըլլային Ատոմի աչքերը, դժվար էր տեսնել քանի մը քայլ անդին: «Բարեբախտաբար,— խորհեցավ Ատոմ,— մարդիկը վերջերս ամբողջովին ներմակի ներկեցին իրենց խանութը… Բան մը գիտեն եղեր…»: Կանգ առավ, հասած էր նպարավաճառի շենքին առջև: Լույսի ոչ մեկ նշույլ կերևեր: «Մարդիկը շատոնց պառկեր են… ի՞նչ ընեին հացը, ինծի, հրամանի սպասեի՞ն… մարգարեանայի՞ն, որ մերինը պիտի ծնի այսօր…»,— մենախոսեց ան մտովի, բայց այդ խորհրդածություններու հետ քովընտի որոշեց հնչեցնել դրան էլեկտրական զանգը, թեթև, շատ թեթևորեն: Ցուցամատով հնչեց կոճակին վրա: Աշխարհ իրար անցավ ներսը, զանգի աղմուկ մը, որ մեռելներն իսկ կրնար ոտքի հանել: Սպասեց սրտատրոփ, մեկ քանի վայրկյան: Ձայն ձուն չելավ ներսեն: «Ի՞նչ ծանր քուն ունին»,— խորհեցավ ու մատը դարձյալ տարավ կոճակին, ուրիշ ի՞նչ կրնար ընել: Զանգը հնչեց դարձյալ սուր ու երակոտոր: Սիրտը վեր ցատկեց հանկարծ, ուրախ և հուսադրված: Լսեց, որ պատուհան մը կըբացվի…

*«Էհ, վո՛ւ, Փիշե նու լա փե… ֆութե նու լը քան[1]…»:*— Բարկանայթ ձայնը կուգար քովի տան մեկ պատուհանեն:

«Ներողություն, հազար ներողություն,— ըսավ Ատոմ մեղմ ու կարեկցություն խնդրող ձայնով մը,— կինս գեշ վիճակի մեջ է, պիտի ծընի… դայակին պիտի հեռաձայնեի…»:

Վայրկյան մը լռություն տիրեց վերը: Ապա լսվեցավ դարձյալ ձայնը, բայց այս անգամ մեղմ, մարդկային շեշտով. «Իմ խեղճ պարոնս, դժբախտություն է իսկապես, բայց նպարավաճառները Փարիզ, իրենց աղջկան այցելության գացին, վաղը երեկո միայն պիտի վերադառնան…»:

«Ի՞նչ կըսեք,— կմկմաց Ատոմ,— վաղը երեկո՞…»:

«Է՛հ, այո՛, վաղը երեկո միայն… իսկ այս կողմերը ուրիշ հեռաձայն չկա, կայարան պետք է երթալ…»:

«Կայարա՞ն» կրկնեց մեքենաբար: Լույս աչքով, այդքան ժամանակ դնելով կրնար դայակին տունը երթալ. լավագույնը, հարմարագույնը այդ

[1] Էհ, դու, մեզ հանգիստ թող, կորիր այստեղից:

էր արդեն: «Ներողություն, որ ձեզ անհանգիստ բրի»,— ուղղեց իր խոսքը պատուհանի ձայնին ու ետ, դեպի տուն սկսավ երթալ: Որոշեց Մանուկը արթնցնել, ինք առանձին դժվար թե գտներ դայակին տունը: «Մարդ էր թե կին պատուհանեն խոսողը,— հարց տվավ ան ինքզինքին, բայց չկրցավ հաստատ պատասխանել: Թերևս երկու հոգի էին, այր ու կին, առաջինը կոպիտ ու խոժոռ, երկրորդը մեղմ ու կարեկցող շեշտով...»: Քանի մը հարյուր քայլ հառաջացած էր արդեն, երբ նշմարեց, որ հեռուեն պարող ու ցատկոտող լույսի նշույլ մը կհառաջանար դեպի իր կողմը: «Այս ժամուն ո՞վ կրնա ըլլալ»,— խորհեցավ Ատոմ, հասկընալով որ մեկը կուգար հեծելանիվով: Ավելի արագացուց քայլերը, սկըսավ վազել գրեթե: Անորոշ վախ մը զգաց հանկարծ: Չըլլա որ տունը գեշ բան մը պատահած ըլլար...:

«Մեսիյո Ատո՛մ, մեսիյո Ատո՛մ...»,— լսվեցավ հանկարծ ժանինի ձայնը:

Մեկ քանի վայրկյան վերջ հեծելանիվի տկար լույսը կանգ առավ Ատոմի առջև: Ժանին, սպիտակ գիշերազգեստին վրա վերարկու մը անցուցած, ոտքերը մուճակներու մեջ ու առանց գուլպայի, մազերը իրար խառնված, Ատոմին երևցավ որպես նախախնամական պարիկ մը: Այդ տպավորությունը ուրախություն և վստահություն ներշնչեց իրեն, զգաց, թե առանձին չէ: Պահ մը խորհեցավ բռնել ժանինի ձեռքերը ու համբուրել զանոնք, բայց վախցավ, թե ծիծաղելի կդառնա ու հրաժարեցավ իր մտածումը իրագործելե: «Ինչ լավ է սակայն, ընկեր ըլլալ այսպես, ընկեր ըլլալ բոլորին հետ, ամենուրե՛ք... Ու համոզվիլ՝ թե առանձին չես, թե ոչ ոք առանձին է կյանքի դժբախտությանց ու կյանքի պայքարին մեջ»:

«Ընկերուհի՛,— ըսավ ան հանկարծ, այդ կոչումին մեջ դնելով իր ամբողջ հավատամքն ու երախտագիտությունը,— ի՞նչ պատահեցավ, շատ գե՞շ վիճակի մեջ է Զապել...»:

«Ո՛չ, ո՛չ... բայց շատ մոտ են ժամերը... ես կերթամ դայակը կանչելու,— պատասխանեց ժանին համոզիչ շեշտով ու ապա շարունակեց սրտնեղած,— բայց ի՞նչ տեսակ ընկերներ եք դուք, ինչո՞ւ ձայն չտվիք մեզի»:

«Ժամանակը ուշ էր, չուզեցինք անհանգիստ ընել, ամեն ինչ չափ ու սահման մը ունի, չի՞ բավեր ինչ որ ըրիք մեզի համար...»:

«Ի՜նչ անհանգստություն, ի՜նչ չափ ու սահման, ընկեր Ատոմ, եթե մենք իրարու չօգնենք, ալ ինչիս ընկերներն ու բարեկամներն ենք... Բայց, դուք անպայմանօրեն տուն վերադարձեք, ես մեկ ժամեն կհասնիմ դայակին ընկերակցությամբ...»:

Ու ժանին ցատկեց իր հեծելանիվին վրա և իր ոտնաներուն ամբողջ ուժովը սկսավ կոխել «բետալ»-ներուն վրա:

Ատոմ հեռացավ ու fռանաքաքախ հասավ իրենց տան պարտեզին առջև: Շենfին բոլոր սենյակներուն մեջ լույս կար այժմ: Խոհանոցին դռան առջև, հայրը իրեն կսպասեր «խաչյալ Քրիստոս»-ի արտահայտությամբ: Հինգ վեց փոfրիկներ — որոնց մեջ Ատոմի երեf զավակները — վերի սենյակին պատուհանի ապակիներուն վրա տափակցուցած էին իրենց fիթերը ու դուրսը կդիտեին մտահոգ և հետաfրfիր արտահայտությամբ: Ներս մտավ: Մայրը, ձախավեր շարժումներով, ամաններ կպատրաստեր ու ջուր կտաfցներ: Իր զավակը տեսնելով մոտեցավ ու հեծկլտաց.

«Սև ու կապուտ կապեմ[1], տղա՛, կորավ իմ խարս, էլ չազատիր... տե՛, կնա իր մոտ...»:

Ատոմ ուղղվեցավ դեպի ննջասենյակ: Ու կանգ առավ դրան բացվածfին մեջ իսկ, կարծես շանթահար: Իր մարմինը ամբողջովին անդամալուծված, զգայարանfները բթացած էին: Աչfերը, աչfերը սակայն կտեսնեին, հստակ և որո՛շ: Կտեսնեին ահավոր, սոսկալի բան մը: Զապել, անկողինին մեջ երկարած էր կիսամերկ, ամբողջովին զգայազիրկ երևույթով ու աչfերը փակ, իսկ մերկ ոտնաներուն մեջ մարդկային էակ մը, փոfրիկ, ինfն իր վրա կլորված ու անշարժ, փոfրիկ մարդկային էակ մը... ի՛ր զավակը:

Չհամարձակեցավ մոտենալ: Խենթի մը պես խոյացավ պարտեզ ու սկսավ բարձրագոչ աղաղակել, պոռալ, կատղած գազանի մը ոստումներով: Վերեն լսվեցավ երեf փոfրիկներուն աղերսող ձայները. «Հայրի՜կ, հայրի՜կ, պապա՜, մամա՜...»: Ու հանկարծ, հանդարտեցավ: Իր ներաշխարհին ամբողջ խռովfն ու փոթորիկը այդ անմարդկային ձայներով դուրս ելած էին կարծես իր կոկորդեն: Վերադարձավ սենյակ: Մոտեցավ մահճակալին ու սպասեց: Դիտեց իր կինը և զավակը: Դիտեց երկյուղածությամբ ու խղճահարությամբ: Դիտեց իր զոհերը, անո՛նf, որոնf իրեն չափ տառապած էին ու իրմե ավելի զրկված, որովհետև չէին ունեցած այն հավատfը, կռիվի ու պայfարի այն հավատfը, որ մի՛շտ հաղթանակի կձգտի պարտության ամենադաժան ռոպեներու ընթացfին իսկ: Քիչ վերջ, Զապել, համրաբար բացավ իր աչfերուն կոպերը: Դիտեց Ատոմի մարմարացած դեմfը, ապա փորձեց տեսնել իր ոտնաներուն մեջ սեղմված փոfրիկ էակը: Հետո, թույլ ժպիտ մը ուրվագծվեցավ իր դեմfին վրա, իր ակնարկը դարձավ Ատոմի դեմfին ու մրմնջաց.

«Մի՛ վախնար, մարդս, մի՛ վախնար... այս ալ կանցնի...»:

---

[1] *Սուգի սև կապեմ:*

«Այսպես ուրեմն, անառակ մանչուկ, ինծի չսպասեցիր ու առանձին լույս աշխարհ իջար... ո՜հ, ի՜նչքան ալ գեղեցիկ է, ի՜նչքան ալ առողջ ու *մինյոն* է...»,— հիասքանչ բացականչություններով կկատակեր ֆրանսուհի դայակը, որ նորածինին պորտը կտրած էր անմիջապես ու զայն կմաքրեր քաղցր նուշի յուղով: Զապել, անհամբեր, կսպասեր որ իրեն հանձնեին զավակը: Դայակը, դանդաղ ու զգույշ շարժումներով խանձարուրեց նորածինը, ապա լիաշուրթ համբուրելե վերջ զայն, զգուշությամբ տարավ տեղավորեց մորը բազուկներուն մեջ:

«Գիտե՞ք,— խոսքը ուղղեց ան բոլորին,— նորածիններն ալ գիտեն պայքարիլ կյանքի համար ու հաճախ կրնան երկու երեք ժամ ապրիլ իրենց պորտը չկտրված... Ճիշդ ժամանակին հասանք կարծեմ...»:

«Պայքարող ու քաջ զավակ մը պիտի ունենաք, ըսեր Ատոմ,— ընդմիջեց Ժանին— տեսա՞ք որ ձեր բոլոր վախերը, պարապի ելան, Զապելը ձեզմե շատ ավելի քաջ գտնվեցավ, պռավո՜ Զապել...»: Ու հանկարծ, Ատոմի ուղղելով միշտ խոսքը, հարց տվավ.

«Է՜հ, կրկնեցեք տեսնեմ, ի՞նչ պիտի դնեիք անունը...»:

Ատոմ, պարպված ու անբանացած, չդիմացավ այդ հարցումի հրնչումին: Ո՛չ, ինք չէր կրնար պատասխանել. իրավունք չուներ պատասխանելու: Այդ ստեղծագործության մեջ իր դերը եղած էր տառապանք, հուսախաբություն ու դժբախտություն պատճառել իր կնոջ՝ Զապելի, նորածինը ծնող մորը, որուն կիյնար ամեն իրավասություն, տնօրինության ամեն հեղինակություն:

Քրտինքի քանձր կաթիլներ կիջնեին իր ճակտեն վար ու աչքերուն առընթեր բան մը ավելցնելով իրենց ծավալին վրա, կողողեին զույգ այտերը ու կլնանային ծնոտին վրա:

Ժանին, շառագունած էր հանցավորի մը նման: Փորձեց վերագտնել իր զվարճախոսությունը ու փարատել հարցումին պատճառած ծանր տըպավորությունը, բայց չհաջողեցավ, շրթները մնացին փակված: Այդ պահուն, սակայն, նորածինը միշտ իր երկու ձեռքերուն մեջ, Զապել կես մեջքով ցցվեցավ անկողնին վրա, կարեկցող արտահայտությամբ մը երկար դիտեց իր ամուսնուն քրտնաթաթախ ու պրկված դեմքը, ապա ամոքեն իր կուրծքին սեղմեց իր զավկին տաքուկ մարմինը, ու, երկուքն ալ երջանկացնելու հաստատ հավատքով, ինքը պատասխանեց Ժանինի, մեղմ այլ վճռական շեշտով մը.—

«ԱՆՈՒՆԸ ՄԱՍԻՍ ԴՐԻՆՔ»: